



Բ. ԼԵՈՆՏԵՎ

Մաշտոցանական
աշխատանքը
կոպոտնաւթյաւ
և ՊԱՏԻԹԵՐԹԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿՈՆՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՅԵՎ ՊԱՏԻ ԹԵՐԹԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Մեր մեծ հայրենիքի պաշտպանունակության ամրապնդման հարցերը խորապես հետաքրքրում են կոլտնտեսականներին: Վոչ միայն կոլտնտեսական յերիտասարդությունը, վոր նախապատրաստվում է Բանվորա-գյուղացիական Կարմիր բանակի շարքերը մտնելու, այլև հասակավոր կոլտնտեսականներն ու կոլտնտեսուհիներն աշխուժորեն հետաքրքրվում են ԽՍՀՄ-ի պաշտպանունակության վիճակով, Կարմիր բանակի կյանքով ու կենցաղով, միջազգային դրություն հարցերով: Ուշագիշտ հետևելով պատերազմի վտանգի աճմանը, նոր համաշխարհային պատերազմի ֆաշիստական հրձիգների ստոր վոտնձգություններին՝ կոլտնտեսականները ձգտում են անմիջական մասնակցություն ունենալ պաշտպանության աշխատանքում, ուղղում են ծանոթանալ ժամանակակից ռազմական տեխնիկային, ուսումնասիրել ռազմական գործի այս կամ այն ճյուղը:

Յեվ այդ լիովին հասկանալի յե: Կարելի՞ յե արդյոք վորևէ ուրիշ յերկրում ժողովրդական լայն մասսաների այնպիսի սիրալիր վերաբերմունք գտնել դեպի իր հայրենիքը, ինչպիսին կա մեզ մոտ՝ Խորհրդային յերկրում:

Վե՛հ, այդպիսի հայրենասիրություն, այդպիսի սեր դեպի իր հայրենիքը ուրիշ վոչ մի տեղ գտնել չի կարելի:

Միայն սոցիալիստական կարգերն են ուրախ, յերջանիկ կյանք տալիս միլիոնավոր աշխատավորներին, ապահովում նրանց համար աշխատանքի իրավունք, հանգստի իրավունք, կրթության իրավունք: Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության մեջ յուրաքանչյուր աշխատավոր իրեն զգում է իր յերկրի և նրա անսահման հարստությունների լիերավ տերը, կոմունիզմի մեծ, պատմական կառուցման մաս:

նակիցը: Ահա թե ինչու խորհուրդները Յերկրի քաղաքացիները խորին սիրով են առգործած դեպի իրենց հայրենիքը:

Մեր յերկիրը հարստանում ու ծաղկում է: Ամբողջ մարդկության աչքի առաջ, ամբողջ աշխարհի բանվորների և գյուղացիների աչքի առաջ սոցիալիզմը նորանոր հաղթանակներ է տանում: Լենինի—Ստալինի մեծ կուսակցության ղեկավարությամբ, չտեսնված կարճ ժամանակամիջոցում, մեր հայրենիքը աղքատ, հետամնաց յերկրից դարձավ առաջավոր, հզոր սոցիալիստական պետություն:

Անընդհատ աճում է կապիտալիստական յերկրների բանվորների ու գյուղացիների սերը ԽՍՀՄ-ի նկատմամբ, աճում է նրանց հավատը՝ սոցիալիստական հեղափոխության վերջնական հաղթանակի նկատմամբ ամբողջ աշխարհում: Դրա հետ միասին աճում է նաև միջազգային բուրժուազիայի ատելությունը՝ դեպի բանվորների ու գյուղացիների սոցիալիստական ծաղկող պետությունը: Իմպերիալիստական գիշատիչները վոչ մի բույն չեն դադարում պատերազմի պատրաստություն տեսնել, առաջին հերթին ընդդեմ ԽՍՀՄ-ի՝ Սոցիալիզմի Յերկրի: Լրտեսություն, տեղորի և ֆրասարություն միջոցով ֆաշիստական պետությունների կառավարությունները ձգտում են թուլացնել մեր հայրենիքի հզորությունը, վորպեսզի խորհուրդների Յերկրի վրա ռազմական հարձակում գործելու դեպքում հաղթանակ ապահովեն իրենց համար: Ֆաշիզմի ակտիվ ռզնականներ եյին հանդիսանում հակահեղափոխական բանդիտները՝ հայրենիքի տրոցկիստական-բուխարինական ստոր դավաճանները, վարոնք ցանկանում եյին մեր յերկրում վերականգնել կապիտալիստական կարգերը:

Այդ պայմաններում մեր յերկրում մասսայական պաշտպանական աշխատանքը մեծ նշանակություն է ստանում: Քաղաքի ու գյուղի միլիոնավոր աշխատավորները պաշտպանական զբաղանություն վիթխարի ու շարունակ աճող պահանջ են առաջադրում, ակտիվորեն մասնակցում են ՊԱՋԸ-Ավիաբիմի կազմակերպությունների աշխատանքին, հոգատարություն ու սիրով են շրջապատում հարազատ Կարմիր բանակը, մտնում են պաշտպանական խմբակների մեջ:

«Հայրենիքի պաշտպանությունը ԽՍՀՄ յուրաքանչյուր քաղաքացու սրբազան պարտականությունն է» — այսպես է ասված Ստալինյան Սահմանադրության մեջ:

Կոլտնտեսային ու բրիգադային պատի թերթերը և գյուղ-թղթակիցները կարող են և պետք է մեծ ռզնություն ցույց տան տեղական կազմակերպություններին՝ կոլտնտեսականների մեջ պաշտպանական աշխատանքը ծավալելու գործում:

Պատի թերթը բոլոր հնարավորություններն ունի կոլտնտեսության մեջ պաշտպանական աշխատանքի իսկական կազմակերպիչը դառնալու: Նրա գյուղ-թղթակցային ակտիվը, պաշտպանական խմբակների ղեկավարները, նախազինակոչայինները, զորացրված կարմիր բանակայինները — ահա այն կադրերը, վորոնց վրա պետք է հենվի պատի թերթի խմբակը:

Պատի թերթի մարտական խնդիրն է որոշաորե կոլտնտեսականների մեջ անսահման սիրո զգացմունք դաստիարակել դեպի իրենց մեծ հայրենիքը, բացատրել, թե մեզ համար ինչով է թանգ մեր հայրենիքը, ինչու պետք է մենք սովորենք պաշտպանել այն և միշտ պատրաստ լինել պաշտպանության: Յուրաքանչյուր կոլտնտեսային ու բրիգադային պատի թերթի պարտականությունն է՝ կոլտնտեսականներին ռզնել կազմակերպելու պաշտպանական գործնական աշխատանք և ուսուցում, ամեն որ պատմել նրանց, թե ինչ պետք է անել մեր յերկրի պաշտպանության կուրսին ամրապնդելու համար, ինչպես անել, վորեք ղեկավար կադրեր գտնել դրա համար և փոխանցել պաշտպանական աշխատանքի փորձը:



ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԸ

Հասակավոր կոլտնտեսականները լավ գիտեն, թե խորհրդային իշխանություն տալիս են ինչպես և փոխվել գյուղացու կյանքը: Դրա համար բավական և միայն, վոր նրանք հիշեն իրենց սեփական անուրախ վիճակը ցարակյան Ռուսաստանում և համեմատեն այն այսօրվա կոլտնտեսային ուրախ կյանքի հետ:

Իսկ մեր կոլտնտեսային յերիտասարդությունը յերբեք չի տեսել հին, իրավադուրկ կյանքը: Այժմ մեր պատանու կամ աղջկա համար նույնիսկ դժվար և պատկերացնել, թե այդ ինչպես եր լինում, վոր ցարակյան Ռուսաստանում կրթություն եյին ստանում միայն կավածատերերի, վաճառականների ու կուլակների զավակները, վոր գյուղացիների յերեխաները հարկադրված եյին 10 տարեկան հասակից արդեն վաստակի հետեից ընկնել, վոր միլիոնավար գյուղացիներ մատնված եյին սովի, աղքատության ու անողոր շահագործման՝ կավածատերերի և արյունախում կուլակների մոտ:

Այժմ լույս և ընծայված լավ, հանրամատչելի գրքերի մի սերիա. այդ գրքերը խմբվել են ու գյուղթղթակիցներին կոգնեն իրենց աշխատանքում: Վորպես որինակ հիշատակենք դրանցից մի քանիսը:

Ահա բազմամիլիոն տիրաժող լույս և ընծայված «Մեր հայրենիքը»¹⁾ գիրքը (Համ. Կ (բ) Կ Կ Կ Կոլսհրատի հրատարակություն 1937 թ.): Այդ գիրքը, վոր գրված և պարզ ու լավ լեզվով, հասկանալի յե ընթերցողների ամենալայն խավերին: Նրա մեջ ցայտուն ու գունագեղ կերպով պատմված և այն մասին, թե ինչ եր մեր յերկրը կապիտալիստների ու կավածատերերի տիրապետության օրով և ինչ և դարձել նա այժմ: Ընթերցողը

¹⁾ Հայերեն հրատարակել և Հ Կ (բ) Կ Կ Կ Կոլսհրատը 1938 թ.

այդ գրքից կիմանա այն ուղին, վոր անցել են մեր արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը, կիմանա աշխատավորության կյանքում տեղի ունեցած խոշոր փոփոխությունների մասին, մեր խորհրդային կուլտուրայի ու կենցաղի նվաճումների մասին: Այդ գրքում մանրամասն նկարագրված են միութենական 11 խորհրդային հանրապետությունները: Գրքին կցված և ԽՍՀՄ-ի գունավոր քարտեզը:

Այդ գրքի ուսումնասիրություն համար կարելի յե խրճիթ-ընթերցարանում կամ կոլտնտեսային ակումբում հատուկ խմբակ կազմակերպել: Այդ գրքի նույնիսկ հասարակ բարձրաձայն ընթերցանությունը կհետաքրքրի ունկնդիրներին և շատ բան կտա նրանց:

Պատի թերթի խմբիլը, գյուղթղթակիցներն ակումբի կամ խրճիթ-ընթերցարանի հետ հնարավորություն ունեն լավ կազմակերպելու այդ գործը: Ամենից առաջ նրանց անհրաժեշտ և ոժանդակ նյութեր և լրացուցիչ գրական նյութեր պատրաստել: Ձեռք բերել ԽՍՀՄ քարտեզն՝ ավելի մեծ չափի, քան կցված և այդ գրքին, թվական տվյալներ բերել մեր ժողովրդական տնտեսության առանձին բնագավառների աճման մասին, հատվածներ՝ Լենինի-Ստալինի աշխատություններից, ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրությունների ժամանակ ընտրական ժողովներում ընկերներ կալինինի, Մոլոտովի, Կազանովիչի, Վորոշիլովի, Յեժովի, Անդրեյևիչի ունեցած յեղութներից-այդ բոլորը պետք և ոգտագործվեն խմբակի աշխատանքների ժամանակ: Թվական աղյուսակներ կարելի յե գտնել «Խորհրդային իշխանության քսան տարին» վիճակագրական ժողովածվում, վորն նույնպես լույս և ընծայված միլիոնավոր տիրաժող (Համ. Կ (բ) Կ Կ Կ Կոլսհրատ 1937 թ.):

Հենց պատի թերթում կարելի յե հատվածներ տեղավորել «Մեր հայրենիքը» գրքից, առանձին թվական տվյալներ՝ վիճակագրական տեղակատվից: Բայց դրանց հետ միասին անհրաժեշտ և տեղավորել նաև տեղական նյութեր. վորեն հասակավոր կոլտնտեսականի պատմածը հին ժամանակի կյանքի մասին, ցարական բանակում ծառայության մասին, գյուղացու իրավադուրկության մասին անցյալում, այն մասին, թե ինչպես իրենց յերեխաների կյանքը Խորհրդային իշխանության օրոք նման չե գյուղական պատանեկության հին կյանքին:

«Մեր հայրենիքը» գիրքն այժմ Կարմիր բանակայիններին և Կարմիր նավատորմայինների ծառայության առաջին տարվա հիմնական դասագիրքն է: Հենց դրա համար ել կարևոր է այժմ այդ գրքին ծանոթացնել կոլտնտեսային նախագինակոչային յե-
րիտասարդությանը: «Մեր հայրենիքը» գիրքը խորհրդային հայ-
րենասերներին նախնական գիտելիքներ կտա իրենց մեծ, սոցիա-
լիստական հայրենիքի պետական կյանքի ու կառուցվածքի մա-
սին, կծանոթացնի նրանց բազմազգ խորհրդային յերկրի հետ:

Կան և ուրիշ գրքեր, վորոնք պետք է հանձնարարել ըն-
թերցողներին: Այսպես, որինակ՝ Ա. Կոսարյովի «Ստալինյան Սահմանադրությունն ու խորհրդային յերիտասարդությունը» գիրքը (Համ. ԼԿՑԵՄ Կ Կ հրատարակչություն «Մալադայա Գը-
վարդիա» 1937 թ): Այս գրքում բազմաթիվ ցայտուն փաստեր
են բերված ցարական Ռուսաստանի, կապիտալիստական յերկր-
ների բանվոր ու գյուղացի յերիտասարդության կյանքից և
մեր խորհրդային յերջանիկ յերիտասարդության կյանքից:

Բարձրաձայն ընթերցանության համար հետաքրքրական է
նաև Մ. Ի. Կալինինի «Ինչ տվեց խորհրդային յիշխանությունն
աշխատավորներին» գրքույքը: Այդ գրքույկը պետք է հանձնա-
րարել յուրաքանչյուր կոլտնտեսականի ու մենատնտեսի:

Մենք հանձնարարում ենք նաև «ԽՍՀՄ պատմության հա-
ժառոտ դասընթացը» դասագիրքը՝ պրոֆ. Շեստակովի յմբարդու-
թյամբ: Այդ գրքով այժմ սովորում են մեր դպրոցականները,
բայց մեծահասակների համար ել ոգտակար է կարդալ այն: Չե-
վոր միայն մեր հայրենի յերկրի պատմությունն յմանալով, յմա-
նալով աշխատավորության հերոսական պայքարն յր ազատա-
գրության համար, մենք կկարողանանք, յինչպես հարկն է, գի-
տակցել մեր ներկան և կսովորենք ավելի շատ զնահատել ու
սիրել մեր սոցիալիստական հայրենիքը:

Պատի թերթն յր եջերում պետք է մասսայականացնի վե-
րոհիշյալ գրքերը, հատվածներ տեղավորի նրանցից, կոլտնտեսա-
կանների կարծիքները տպի նրանց մասին: Կոլտնտեսականնե-
րին ծանոթացնելով յրենց մեծ հայրենիքին, նրա պատմության
և յերջանիկ կյանքի համար մղած պայքարին՝ պատի թերթը
դրա հետ միասին պետք է ցույց տա, թե ում ենք պարտական
մենք մեր հաղթանակների համար, ով է մեզ հասցրել այս յեր-
ջանիկ կյանքին: Բոլշևիկների կուսակցությունը, Լենինի Ստա-
լինի կուսակցությունը՝ բանվոր դասակարգի ավանգարդը, սո-

ցիալիզմի համար մղվող պայքարում բոլոր աշխատավորների դե-
կավարն է կազմակերպել ու ապահովել մեր հաղթանակները:

Պատի թերթի յանդերսն է՝ ցույց տալ բոլշևիկյան կուսակ-
ցության և նրա հանճարեղ սոաջնորդ ընկեր Ստալինի դեկա-
վար դերը սոցիալիզմի կառուցման գործում մեր յերկրում, մեր
երկիրը հզոր յնդուստրիալ պետություն դարձնելու, յոռոր սո-
ցիալիստական հողագործության յերկիր դարձնելու գործում:

Կոլտնտեսությունների ամենորյա կյանքը գյուղում յեցուն
է կոլտնտեսականների ու կոլտնտեսուհիների անսահման նվիր-
վածության բազմաթիվ որինակներով յրենց սոցիալիստական
հայրենիքին, կոլտնտեսային կարգերին: Մեզ մոտ քիչ չեն այն
դեպքերը, յերբ կոլտնտեսականներն ու կոլտնտեսուհիներն յի-
րենց կյանքը վտանքի յենթարկելով՝ ազատում են հանրային
սոցիալիստական սեփականությունը, կոլտնտեսային բարիքը
զանազան տեսակի թշնամիներից և տարերային աղետ-
ներից — հրդեհներից, հեղեղումներից, բուքերից: Պատի թերթ չի
կարող խորհրդային հայրենասիրությունը ցույց տվող այդ փա-
տերի ու որինակների կողքով անցնել: խորհրդային հայրենիքին
նվիրվածությունը ցույց տվող յուրաքանչյուր այդպիսի փաստ
կամ դեպք պետք է մանրամասնորեն յուսարանվի պատի թեր-
թում:

Յեվ հողվածներում, և՛ յողունգներում, և՛ յուսանկարներում
պատի թերթը պետք է ամեն որ ցույց տա մեր սքանչելի սո-
ցիալիստական հայրենիքը, նրա զավակների ու գուստերի ան-
սահման նվիրվածությունը Լենինի-Ստալինի գործին:

ԽՍՀՄ-Ի ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՇՐՋԱՊԱՏՈՒՄԸ

Համ. Կ (բ) ԿԿԿ 1937 թ. փետրվար-մարտյան պլենումում ընկեր Ստալինն ասել է՝

«Կապիտալիստական շրջապատում այդ դատարկ ֆրազ չէ, այդ ունի և շատ մի անախորժ յերեվոյթ ե: Կապիտալիստական շրջապատումը-այդ նշանակում է, վոր կա մի յերկիր- խորհրդային Միությունը-վորն իր մոտ սոցիալիստական կարգեր ե հաստատել և բացի դրանից կան շատ յերկրներ-բուրժուական յերկրներ վորոնք շարունակում են կապիտալիստական կյանք վարել և վորոնք շրջապատում են խորհրդային Միությունը, առիթի սպասելով, վորպեսզի հարձակվեն նրա վրա, ջախջախեն նրան կամ համենայն դեպս խարխալեն նրա հզորությունը և թուլացնեն նրան»:

Պետք ե դյուզի աշխատավորներին ցույց տալ, թե վորոնք են յերկրագնդի այն «հինգ վեցերորդը», վորոնց մեջ դեռ տիրապետում ե կապիտալիստական ուժերը: Պետք ե բացատրել, թե վորն ե այդ փաստի նշանակությունը մեր ամբողջ կյանքի համար, մեր սոցիալիստական յերկրի համար և ինչպիսի հետևություններ պետք ե անենք մենք կապիտալիստական շրջապատման փաստից խՍՀՄ-ի պաշտպանության ամրապնդման իմաստով և լրտեսների դեմ անողոք պայքար մղելու իմաստով, լըրտեսներ, վորոնց ուղարկում են մեզ մոտ կապիտալիստական յերկրները, առաջին հերթին ֆաշիստական յերկրները:

Պատի թերթն ամեն օր պետք ե մտրիլիզացիայի յենթարկի իր ընթերցող-կուտնտեսականներին՝ անողոքաբար պայքար մղելու ժողովրդի ստոր թշնամիների դեմ, ֆաշիստական անարդար զորակալների՝ տրոցկիստական-բուլժարինական բանդիտների և հակահեղափոխական բուրժուական նացիոնալիստների դեմ, վորոնք ցանկանում են վերականգնել կապիտալիստների և կալ-

վաճառների տիրապետությունը մեր յերկրում, վորոնք ցանկանում են մեր սքանչելի սոցիալիստական հայրենիքը ավերմունքի մատնել ֆաշիստական բարբարոսների ձեռքը:

Պատի թերթի խմբկողը պետք ե սովորի մերկացնել այդ տրոցկիստական-բուլժարինական ստոր մատնիչներին, հայրենիքի դավաճաններին, ինչքան ել նրանք ճարպկորեն դիմակավորված լինեն, ինչքան ել յերկերեսանիություն անեն նրաք, պետք ե սովորի դուրս քաշել նրանց իրենց վորջերից և անողոքաբար արմատախիլ անել նրանց մեր կուտնտեսություններից:

Համ. Կ (բ) Կ Ստալինյան Կենտկոմից պետք ե սովորել թշնամուն մերկացնելու կարողություն: Ստալինյան այդ կարողության օրինակ ե հանդիսանում Համ. Կ (բ) ԿԿԿ 1938 թվի հունվարյան Պլենումի վորոշումը՝ «Կոմունիստներին կուսակցությունից վտարելու ժամանակ կուսկադավերպությունների սխալների մասին Համ. Կ (բ) Կ-ից վտարվածների բողոքներին ձևական-բյուրոկրատական վերաբերմունք ցույց տալու մասին և այդ թերությունները վերացնելու միջոցների մասին»:

Այս ե յուրաքանչյուր պատի թերթի խմբագրի, յուրաքանչյուր խմբկողի, յուրաքանչյուր գյուղթղթակցի ամենաառաջին պարտականությունը:

Վերջապես, հարկավոր ե բացատրել, թե ինչպես են խմբավորվում ագրեսիվ յերկրները, վորոնք են ռազմական վտանգի հիմնական ոջախները:

Սրան համապատասխան կարելի յե նշել մի շարք թեմաներ, վորոնց վրա առաջին հերթին պետք ե աշխատեն գյուղթղթակիցներն ու պատի թերթերի խմբկողները:

Պետք ե սկսել կուտնտեսականներին կապիտալիստական աշխարհի մասին, բուրժուական յերկրների տնտեսական ու քաղաքական վիճակի մասին ընդհանուր ծանոթություն տալուց:

«ԽՍՀՄ-ն և կապիտալիզմի յերկրները» գրքում (Համ. Կ (բ) ԿԿԿ Կուսհրատ, 1937 թ. տիրած յերկու միլիոն օրինակ) տըրված են այդ թեմային անհրաժեշտ հիմնական նյութերը: Այդ գրքի 3-րդ գլուխը հատկապես նվիրված ե կապիտալիստական յերկրների գյուղացիության կյանքին: 6-րդ գլուխը տալիս ե խորհրդային Միության պետական կառուցվածքի և կապիտալիստական յերկրների պետական կառուցվածքի համեմատությունը: Այդ նույն գրքում թվական ցույցուն նյութեր են տրված կապիտալիստական յերկրների սպառազինման մասին, նոր համաշ-

խարհային պատերազմի նախապատրաստության մասին, ֆաշիստական յերկրների հափշտակողական քաղաքականության մասին:

Աշխատանքի ամենամատչելի ձևն է այդ փոքրիկ, հանրամատչելի գրքի բարձրաձայն ընթերցանությունը, սակայն հետագայում անհրաժեշտ է ավելի խորն ուսումնասիրել այդ հարցերը: Պատի թերթի խմբկուրը պրոպագանդիստների և խրճիթ-ընթերցարանի ակտիվիստների ոգնության մար կարող է կազմակերպել Վ. Ի. Լենինի և Ի. Վ. Ստալինի յերկրի խմբակային ընթերցանություն և ուսումնասիրություն:

Սխալ կլինեք փորձել՝ այդ կարևոր թեման տեղավորել մի վորեն մեծ ղեկուցման մեջ: Այդ աշխատանքը պետք է կատարել ավելի յերկար ժամանակ, պրոպագանդի բաղմապիսի ձևերով ու մեթոդներով:

Մի դեպքում այդ կլինի ֆաշիստական հափշտակիչների քաղաքականության մասին նոր հոգվածի բարձրաձայն ընթերցանություն «Բուլշևիկ» ժուռնալից կամ «Պրավդայից»: Մի ուրիշ դեպքում միենույն հարցին (որինակ՝ կապիտալիստական յերկրների գյուղացիության դրության մասին) նվիրված մի քանի գրքի ուսումնասիրություն, մի քանի յերրորդ դեպքում, այդ կարող է լինել ընթերցող-կուտնտեսականի գրավոր կարծիքն իր կարդացած գրքի մասին, կամ ընթերցողների կոնֆերենցիան վորտեղ յեղած ամենահետաքրքիր կարծիքները կարող են տեղավորվել պատի թերթում:

Պատի թերթի խմբկուրը և նրա ամբողջ ակտիվը յուրաքանչյուր այդպիսի դեպքում կազմակերպչական խոշոր աշխատանք պետք է կատարեն:

ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրական կամպանիայի ընթացքում ամեն մի կուտնտեսության մեջ աճեցին մի քանի տասնյակ նոր հիանալի ընթերցող-գրուցարարներ, ագիտատորներ ու պրոպագանդիստներ, գյուղթղթակիցների նոր, հիանալի կադրեր: Յուրաքանչյուր պատի թերթի խմբկուր խնդիրն է՝ ամբարանդել և ամեն որ աճեցնել անկուսակցական ակտիվի նորանոր կադրեր-գյուղթղթակիցներ, ընթերցողներ, ագիտատորներ և պրոպագանդիստներ, ոգնելով նրանց ուսման գործին կուտնտեսականների ու կուտնտեսուհիների մեջ տարած ամենորյա քաղաքական մասնայական աշխատանքին:

Որլովի մարզի Մցենսկի շրջանի Սպաս-Լուտովյան գյուղ-խորհրդում լույս տեսնող «Կուլադնիկ» պատի թերթի գյուղթղ-

թակիցները Գերագույն Խորհրդի ընտրական կամպանիայի ընթացքում կուսակցական կազմակերպության ոգնության մար կազմակերպեցին խմբակներ, կուտնտեսականների մեջ ունեցած մի քանի տասնյակ ընթերցումներ ու գրույցներ՝ նվիրված Ստալինյան Սահմանադրությանը և ընտրական ստալինյան որենքին:

Դնեպրոպետրովսկի մարզի Մոլոչանսկի շրջանի Յեժովի անվան կուտնտեսության «Պուտ կ սոցիալիզմում» (Путь к социализму) պատի թերթի գյուղթղթակիցներն ու խմբկուրի անդամներն ընտրական կամպանիայի ընթացքում կուտնտեսականների մեջ ունեցան մոտ 100 ընթերցանություն ու գրույց:

Այսպես կարող են և պետք է աշխատեն յուրաքանչյուր պատի թերթի գյուղթղթակիցները:

Պատի թերթի խմբկուրը պետք է ղեկավարի ընթերցողներին և գյուղթղթակիցներին, ոգնի նրանց՝ ընթերցումները կազմակերպել հետաքրքիր ու բովանդակալից:

Այսպես, որինակ, անհրաժեշտ է նախապատրաստել Յեվրոպայի քարտեզը, Իսպանիայի կամ Չինաստանի քարտեզը: Կարելի յե այս կամ այն հարցին նվիրված նյութեր կտրել վերջին ամսվա թերթերից: Կարելի յե գեղարվեստական խոշոր յերկերից պատմվածքներ կամ հատվածներ ընտրել կապիտալիստական յերկրների կյանքի մասին:

Կարելի յե կուտնտեսության կուսակցական կազմակերպության և խրճիթ-ընթերցարանի կամ կուտնտեսային ակումբի հետ պայմանավորվել և կազմակերպել հատուկ յերկերներ՝ նվիրված վորոշ յերկրների ուսումնասիրությանը: Որինակ՝ վերցնելով Ճապոնիան, պետք է պատրաստել այդ յերկրի քարտեզը, նրա ղինված ուժերի աղյուսակը, լրագրային նյութեր հավաքել Չինաստանում Ճապոնիայի մղած հափշտակողական պատերազմի մասին: Այդպիսի գրույց դասախոսությունը շատ հետաքրքիր իլյուստրացիա կհանդիսանա ընկեր Ստալինի նախադրուշացման՝ Հեռավոր Արևելքի պատերազմի ոջախի մասին:

Մի ուրիշ այդպիսի յերկույի նյութ կարող են լինել այն պատերազմները, վոր այժմ արդեն ֆաշիստները մղում են իսպանական ու չինական ժողովուրդների դեմ:

Իսպանական ժողովրդի հերոսական պայքարը խռովարարների և դերմանո-իտալական ֆաշիստական ինտերվենտների դեմ, վոր ցույց է տալիս, թե միախմբված ժողովուրդը կարող է դաժան պարտության մատնել ֆաշիստական ղազաններին, ինչպես

և ճապոնական իմպերիալիզմի պատերազմը Չինաստանի հետ, խորապես հետաքրքրում ու հուզում են մեր հայրենիքի բոլոր աշխատավորներին: Մեր թերթերն ու ժուռնալներն («Բոլշևիկ», «Սպուտնիկ ագիտատոր», «Սպուտնիկ կոմունիստ» վերնագրեր) հետաքրքրական նյութեր են տեղափոխում այդ դեպքերի մասին: Իսպանիայում մղվող պատերազմի մասին կան մի քանի գրքույկներ, վերոնք հրատարակված են մասսայական տիրաժողով:

Իսպանական ու չինական ժողովուրդների դեմ ֆաշիզմի մղած հափշտակողական պատերազմի մեջ նախ իր ամենալիակատար արտացոլումն է գտնում ֆաշիստական պետությունների հափշտակողական քաղաքականությունը, պետություններ, վերոնք ձգտում են ստրկացնել ուրիշ ազգերին: Յերկրորդ՝ դերմանական ու իտալական ֆաշիստների ինտերվենցիան Իսպանիայում և ճապոնական պատերազմը Չինաստանում մեզ ցույց են տալիս ֆաշիստական պետությունների կողմից կազմակերպվող ժամանակակից պատերազմի բնույթը, դժան պատերազմի, մի պատերազմ, վոր իր հետևից բերում է միլիոնավոր խաղաղ բնակիչների անխնա վոչնչացում և կոլտուրական արժեքների բարբարոսական վոչնչացում ֆաշիստների կողմից:

Ցանկալի չե՝ Իսպանիայում կամ Չինաստանում մղվող պատերազմի մասին դատախոսություն կազմակերպելու համար հրավիրել ԲԳԿԲ մոտակա զորամասի կամ մոտակա զինվորական դպրոցի հրամանատարներից մեկին: Այդ հնարավորություն կտա ունենդիրներին ծանոթացնելու այդ դեպքերի ռազմա-ստրադեգիական կողմի հետ: Վատ չի լինի պատի թերթում հատուկ հոդված գետեղել Չինաստանի կամ Իսպանիայի ռազմաճակատների վորևե կարևոր ռազմական դործողության առթիվ:

Այդպիսի յուրաքանչյուր դատախոսություն ու զրույց կարող է հետաքրքիր նյութ տալ պատի թերթի համար: Հարկավոր է միայն, վոր խմբկողմ հմտորեն ոգտագործի այդ: Պատի թերթում հարկավոր է մանրամասն ինֆորմացիա տալ այդպիսի դատախոսությունների մասին, տեղափոխել կոլտնտեսականների կարծիքներն ու նրանց ցանկությունները: Կարմիր բանակից հրավիրված հրամանատարին կարելի չե խնդրել, վոր նա պաշտպանական աշխատանքի մասին մի փոքրիկ հոդված տա պատի թերթին:

Վերջին ժամանակվա ընթացքում, մանավանդ ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրական կամպանիայի ժամանակ, արտասովոր չափով աճեց ԽՍՀՄ քաղաքացիների քաղաքական ակտիվությունը, նրանց հետաքրքրությունը դեպի քաղաքական կյանքը: Կոլտնտեսականին և կոլտնտեսուհուն հետաքրքրում է վոչ միայն այն, ինչ կատարվում է իրենց կոլտնտեսությունում, իրենց շրջանում, նրանց հետաքրքրում է նաև ամբողջ յերկրի քաղաքական կյանքը և այն, ինչ տեղի չե ունենում արտասահմանում:

Հետաքրքրական է, որինակ, Դենպրոպետրովսկու մարզի Մոլոչանսկի շրջանի Յեժովի անվան կոլտնտեսությունում «Պուտ կոոցիալիզմ» պատի թերթի վործը: Որ-ընդմեջ լույս տեսնող այդ թերթի յուրաքանչյուր համարում «Սահմանի այն կողմ» բաժնում լուսարանվում են արտասահմանի կարևորագույն դեպքերը, աշխատավորության հեղափոխական պայքարը կապիտալիզմի ու ֆաշիզմի դեմ: Խմբկողմ քաղվածքներ է տեղափոխում կենտրոնական թերթերից, պատի թերթում ոգտագործում է ռադիոյով ստացված վերջին հաղորդադրությունները:

Այն ինչ, անում են «Պուտ կոոցիալիզմ» և միյուս առաջավոր պատի թերթերը, մատչելի չե և կարող է անել յուրաքանչյուր պատի թերթ:

ՊԱՀՊԱՆԵԼ ՌԱԶՄԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ, ԿԱՐՈՂԱՆԱԼ ՄԵՐԿԱՅՆԵԼ ԹՇՆԱՄՈՒՆ

Σ արկավոր և կոլտնտեսականներին սիստեմատիկաբար ծանոթացնել տրոցկիստական-բուխարինական և այլ ֆաշիստական լրտեսների վոճրադորձ գործունեությունը և մեթոդներին:

Համ. Կ(բ)ԿԿԿ փետրվար-մարտյան պլենումում ընկեր Ստալինը ցուցում տվեց, թե մեր կարևորագույն խնդիրներից մեկն է հանդիսանում «Անհրաժեշտ միջոցներ ձեռք առնել, վոր-պեսզի մեր ընկերները, կուսակցական ու անկուսակցական բոլ-շևիկները հնարավորություն ունենան ծանոթանալու ոտարյեր-կոյա հետախուզական որդանների նպատակներին ու խնդիրնե-րին, վնասարարական դիվերսիոն ու լրտեսական աշխատանքի պրակտիկային ու տեխնիկային»:

Մեր հայրենիքի թշնամիների հետ Խորհրդային յերկրի յուրաքանչյուր քաղաքացի կարող է հանդիպել վոչ միայն ապա-գա պատերազմի որերին, այլև այժմ, յերբ ֆաշիստական յերկրե-րը ԽՍՀՄ-ի դեմ աստիճանաբար են մղում այդ պատերազմը: Մեր յերկրի թիկունքը լրտեսներ, դիվերսանտներ, տեոորիստներ ուղարկելը մեր հայրենիքը շրջապատող կապիտալիստական պե-տությունների սիրած մեթոդներից մեկն է: Պետք է կարողանալ մերկացնել լրտեսներին, պետք է ակտիվորեն ոգնել մեր փառա-պանծ ՆԳժԿ-ին՝ ֆաշիզմի հետախուզների դեմ մղած նրա լար-ված պայքարում:

Սխալ է կարծել, թե յուրաքանչյուր գյուղի, նույնիսկ սահ-մանից հեռու գտնվող գյուղի, կոլտնտեսականները յերբեք չեն կարող հանդիպել ֆաշիստական հետախուզների, ոտարյերկոյա պետությունների տրոցկիստական-բուխարինական գործակա-լների: Վոչ միայն սահմանամերձ գոտում, վորտեղ, ինչպես հայտ-նի յե, հազարավոր կոլտնտեսականներ խորհրդային սահմանա-

պահներին ոգնում են լրտեսներին բռնելու գործում, այլև ԽՍՀՄ-ի մյուս շրջաններում թշնամու գործակալներն իրենց ըս-տոր, քայքայիչ աշխատանքն են կատարում: Նրանցից շատերն աշխատում են խցկվել այն շրջանները, վորտեղ մեր զորամասերն են գտնվում, աշխատում են դիտել գործարանների, այերոգրոմ-ների, ելեվատորների տեղադրությունը, կազմակերպել հրկիզում-ներ ու պայթեցումներ, գնացքների խորտակումներ, խցկվել Կարմիր բանակի գորախաղերի շրջանները:

Պատի թերթի խմբելը կոլտնտեսականների համար պետք է կազմակերպի ընկեր Մուրտովի «Ճապոնա-դերմանա-տրոցկիս-տական գործակալների վնասարարություն, դիվերսիայի և լրտե-սություն դասերը» գրքի ընթերցումներ վորը լույս է տեսել Համ. Կ(բ)ԿԿԿ Կուսհրատի հրատարակությամբ):

Կազմակերպեցեք «կապիտալիստական պետությունների լրտեսությունը» գրքի բարձրաձայն ընթերցանություն («Մալա-դայա-Գվարդիայի» հրատարակություն 1937 թ.) այդ գրքում հա-վաքված են «Պրավդայում» տպված մի շարք նյութեր: Յուրա-քանչյուր կոլտնտեսական պետք է իմանա ոտարյերկոյա հետա-խուզության ստոր միջոցները: վորպեսզի պատրաստ լինի, վոր-պեսզի ժամանակին կարողանա ձանաչել թշնամուն, ինչպիսի դիմակով էլ նա ծածկված լինի:

Այդ գրականություն ուսումնասիրությունն առանձնապես անհրաժեշտ է նախադիտակոչայիններին՝ նրանցից շատերն առա-ջիկա տարում ծառայության կգնան սահմանապահ գորամասե-րը: Սակայն յուրաքանչյուր զորամասում էլ Կարմիր բանակա-յինը պետք է իմանա հետախուզյունների պրիյոմները, ինքն ու-սումնասիրի հետախուզության կանոնները, պետք է կարողանա պահպանել ուղղական գաղտնիքը: Ռազմական գաղտնիքի պահ-պանման մասին պետք է հատուկ դասախոսություններ կազմա-կերպել լորձիթ-ընթերցարաններում կամ կոլտնտեսային ակում-բում: Այդպիսի դասախոսությունները հետաքրքիր կլինեն բո-լոր կոլտնտեսականների համար: չե վոր թշնամի բանակը ու նրա հետախուզյունները հաճախ իրենց անհրաժեշտ տեղեկություն-ներն ստանում են զգոնությունը կորցրած բնակիչներից: Այն հարցերը, վոր տալիս է հետախուզյուն, միշտ էլ թվում են ամե-նաանվնաս, անմեղ հարցեր: Մի շարք մանր «անկալետ» տեղե-

կություններ միացնելով՝ հետախուզող պարզ պատասխան և ըստանում, այն մասին, ինչ հետաքրքրում է իրեն կամուրջների, յերկաթուղիների, գետի ծանծաղուտների, վայրի բնույթի, մոտակա գործարանի արտադրանքի մասին և այլն: Դյուզլիթի կիցները խրճիթվարին և գրադարանապետին պետք է ոգնեն՝ զբաղանություն ընտրել ֆաշիզմի լրտեսների ու հետախուզների դեմ պայքարելու նյութի մասին: Թերթերում, ժուռնալներում նկարագրվում են առանձին դիպվածներ՝ ֆաշիզմի գործակալների քայքայիչ գործունեյության մասին: Այդ թեմաների շուրջը յեղած գեղարվեստական պատմվածքները, հոգվածները և թղթակցություններն առանձնապես պետք են նշել և հանձնարարել կոլտնտեսականներին ու ոգտագործել դրանք պատի թերթ լույս ընծայելու ժամանակ: Անհրաժեշտ է պատի թերթում տեղավորել տեղական նյութեր՝ կոլտնտեսականների կողմից բողջեկյան զգոնություն ցուցաբերելու մասին: Պատի թերթն զգոնություն ցուցաբերելու այդ որինակներով պետք է դաստիարակի կոլտնտեսականներին, մանրամասն նկարագրի այդ դեպքերը, տեղավորի այդ ընկերների նկարները և բոլոր կոլտնտեսականներին կոչ անի՝ լինել նույնպես զգաստ ու արի՝ մեր հայրենիքը թշնամիներից պաշտպանելու գործում:

ԿԱՐՄԻ ԲԱՆԱԿԻ ՅԵՎ ՌԱԶՄԱԾՈՎԱՅԻՆ ՆԱՎԱՏՈՐՄԻ ՔՍԱՆԱՄՅԱԿԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

1938 թվի փետրվարի 23-ին լրանում է մեր հերոսական բանվորագյուղացիական Կարմիր բանակի և Ռազմածովային նավատորմի 20 տարին: Ամբողջ խորհրդային ժողովրդի համար այդ մի մեծ տոն է: Աշխարհում չկա մի ուրիշ բանակ, վորին ժողովրդական մասսաներն այնպես ջերմորեն սիրելիս լինեն: Կարմիր բանակը խորհրդային բանվորների ու գյուղացիների մոկց ու վոսկորից է ստեղծված:

Պատի թերթի խմբկուրի և ամբողջ կոլտնտեսային աւտիվի համար Կարմիր բանակի ու Ռազմածովային նավատորմի տարեղարծին ու նրա նախապատրաստությունը բացառիկ բարենպաստ ժամանակաշրջան է պաշտպանության աշխատանքը ծավալելու համար:

Կարմիր բանակի ու Ռազմածովային նավատորմի 20-ամյա կի նախապատրաստության կապակցությամբ պատի թերթի խմբկուրը պետք է խրճիթ-ընթերցարանի կամ կոլտնտեսային աւկումրի հետ կաղմակերպի մի շարք յերեկոներ, գեկուցումներ ու բասախոսություններ, պատրաստի ցուցահանդեսներ, ստեղծի զաշտպանական նոր խմբակներ, Կարմիր բանակի փառապանծ տարեղարծին պատի թերթի հատուկ տոնական համար նվիրի: Պատի թերթի խմբկուրի ու գյուղթղթակիցների կարեւորագյուն ննդիրներից մեկն է՝ Կարմիր բանակի 20-ամյակի նախապատրաստության կապակցությամբ ձեռնարկված միջոցառումների ամբողջ սխտեմում (գրույցներում, դասախոսություններում, պատի թերթերում, ֆոտո-ցուցափեղկերում գեղարվեստական յեւեկոներում) արտացոլել սոցիալիստական հեղափոխության մեծ առաջնորդների՝ Լենինի ու Ստալինի դերը աշխարհում առաջին

բանվորա-գյուղացիական Կարմիր բանակի ու նրա հաղթանակ-
ների կազմակերպման գործում:

Կոլտնտեսականների լայն մասսաները պատմական կոն-
կրետ նյութերի հիման վրա պետք է տեսնեն ու գիտակցեն
պրոլետարական հեղափոխության հանձարեղ առաջնորդների
ստրատեգիայի առավելությունը ցարական զենեարանների ու ոտա-
յերկրյա ինտերվենտների «փորձված» ստրատեգիայի համեմա-
տությամբ: Լենինն ու Ստալինը ղեկավարում էին Դենիկինի
ջախջախումը Հարավային ռազմաճակատում, Կռլչակի ջախջախու-
մը՝ Արևելյան ճակատում, Յուդենիչինը՝ Կարմիր Պիտերի մոտ:
Լենինյան-ստալինյան ծրագրերն ու ցուցումները, վորոնք տար-
բեր էին ընդունված բուրժուական ստրատեգիայից, ժխտում
էին տրոցկիստական դավաճանների դավաճանական դրույթները,
հանդիսացան միակ ճշմարիտն ու ճիշտը: Այդ ծրագրերը խոր-
հրդային յերկիրը հասցրին հաղթանակների, հասցրին սպիտակ
գվարդիականների ու ոտարյերկրյա ինտերվենտների ջախ-
ջախման:

Դրա հետ միասին այնպես պետք է անել, վոր քաղաքացիա-
կան կռիվ ժամանակ Կարմիր բանակի ձեռնարկված փառա-
պանծ մարտական եպիզոդների ու զործողությունների ուսում-
նասիրությունը կոլտնտեսականների լայն մասսաների համար
ռազմատակտիկական ուսուցման բնույթ ստանա:

Կարմիր բանակի ու Ռազմա-ծովային նավատորմի 20-ամ-
յակի առթիվ մեր հրատարկչությունները մեծ քանակությամբ
նոր գրքեր լույս կընծայեն:

Արդեն լույս են տեսել մասսայական հրատարակություն-
ներ, վորոնք պետք է լինեն յուրաքանչյուր խրճիթ-ընթերցա-
բանում: Դրանք են, նախ և առաջ, ընկեր Ստալինի աշխատու-
թյունը՝ «Կարմիր բանակի յերեք առանձնահատկությունների
մասին», ընկեր Վորոշիլովի, «Ստալինն ու Կարմիր բանակը»
գրքեր:

Հատուկ ուշադրություն պետք է դարձնել կոլտնտեսական-
ների լայն մասսաներին քաղաքական կռիվի ակնավոր հերոսնե-
րի կենսագրությունը ծանոթացնելու վրա: Ֆրունզեյի, Ջապանի,
Շչերսի, Կիրովի, Որշոնիկիձեյի, Լազոյի հերոսական գործերի մա-
սին պատմություններն ու թղթակցությունները, մեր պանծալի
մարշալների՝ ընկեր ընկեր Վորոշիլովի, Բուդյոննու, Բլյուխերի
կենսագրությունները պետք է պատվավոր տեղ բռնեն պատի

թերթի եջերում: Կարմիր բանակի տարեգրքին նվիրված հա-
տուկ ցուցադրություն:

Աշխատավորները պետք է իմանան քաղաքացիական կռիվի
պատմությունը: Այդ թեմայի մասին հարկավոր է հանդամանո-
րեն դասախոսություններ ու զեկուցումներ կազմակերպել:

Համարյա յուրաքանչյուր գյուղում կան մարդիկ, վորոնք
քաղաքացիական պատերազմի տարիներին կռվել են անթիվ
թշնամիների դեմ, կան քաղաքացիական կռիվ հերոսներ: Այդ
մարդկանց պետք է սիրով ու հարգանքով ցույց տալ կոլտնտե-
սային մամուլի եջերում:

Թող պատի թերթի եջերում քաղաքացիական կռիվի մասին
իրենց հիշողություններով հանդես գան հին Կարմիր գվարդիա-
կաններն ու պարտիզանները: Թող նրանք պատմեն, թե ինչպես
Կարմիր բանակը, կոմունիստական կուսակցության ղեկավարու-
թյամբ կարողացավ ջախջախել տեխնիկական ավելի լավ զինված
թշնամիներին և դրանով՝ իսկ խՍՀՄ ժողովուրդների համար
խաղաղ աշխատանք ապահովել: Այդպիսի պատմությունները
դաստիարակչական մեծ նշանակություն ունեն և հետաքրքրու-
թյամբ կկարդացվեն մեր յերիտասարդու-թյան կողմից:

Վորքան կարելի յե պետք է լայն ծավալել խՍՀՄ ռազմա-
կան զորության պրոպագանդան: Պետք է կոլտնտեսականներին
ցույց տալ, թե ինչքան հզոր ու անխորտակելի յե դարձել մեր
Կարմիր բանակը աշխարհիս լավագույն բանակը: Ցույց տալ,
թե ինչպես Լենինի-Ստալինի կուսակցության ղեկավարությամբ
աճել են մեր բանակի քաղաքական հզորությունը, մարտունա-
կությունը և տեխնիկական սպառազինությունը: Ինչպես յեր-
կրի ինդուստրացումը և գյուղատնտեսություն կուկեկտիվացումը
ոգնեցին Կարմիր բանակի տեխնիկական հզորության աճմանը,
ինչպես են այդ նոր տեխնիկային տիրապետում մեր հրամանա-
տարներն ու մարտիկները:

Մոսկվայի պրոլետարական Կարմիր դրոշի շքանշանակիր
հրաձիգ զինվորայի կապիտան ընկ. Ն. Ն. Գերասիմովը խՍՀՄ
Գերագույն Խորհրդի առաջին նստաշրջանում բանվորա-գյուղա-
ցիական Կարմիր բանակի անունից վոդյունելով ժողովրդի ընտ-
րյալներին՝ ասաց.

— Մեր հրամանատարներն ու քաղաշխատողները աշխա-
տավոր մեծ ժողովրդի միս ու արյունից են, նրա անվեհեր ու

արի զավակներն են: Նրանք գնդերի, դիվիզիաների, կորպուսների, բանակների հրամանատարներ են:

Հարազատ բոլշևիկյան կուսակցության ղեկավարությամբ մեր հրամանատարներն ու քաղաշխատողներն անցան քաղաքական-դաստիարակության Լենինյան-Ստալինյան դպրոցը, վիթխարի հաջողությունների հասան ուղիքով: Երբեք տեխնիկայի և տեխնիկական արվեստի տիրապետման գործում: Կարմիր բանակի շարքերում տասնյակներով, Խորհրդային Միության Հերոսներ կան, հազարավոր մարտիկներ, հրամանատարներ ու քաղաշխատողներ պարգևատրված են ԽՍՀ Միության շքանշաններով:

Աշխարհում վոչ մի բանակ չի ունեցել ու Հունի աշխարհի հրամանատարներ ու մարտիկներ, ինչպիսիք ունի մեր հարազատ, անպարտելի բանվորա-գյուղացիական Կարմիր բանակը:

Անխորտակելի յե Կարմիր բանակի ուժը, վերսկսելու նրան ղեկավարում և բոլշևիկների մեծ կուսակցությունը, Ստալինյան Կենտրոնական Կոմիտեն և Խորհրդային կառավարությունը:

Անխորտակելի յե Կարմիր բանակի ուժը, վերսկսելու նրա մարտիկներն ու հրամանատարներն ամեն որ, ամեն ժամ իրենց վրա դրում են Ստալինյան ջերմ հոգատարությունը, վորը վողեւորում և նրանց ու մղում հերոսությունների սիրագործությունների:

Պաշտպաններում, լողուններում, պատի թերթի վերնագրերում անհրաժեշտ և արտացոլել Խորհրդային խաղաղասիրական քաղաքականության հիմնական գաղափարները: Ի՞նչի համար ի՞նչ նպատակներով և Խորհրդային յերկիրն ստեղծել իր հոգր բանակը: Վոչ նվաճումների և վոչ ել ուրիշ ժողովուրդներին հպատակացնելու և ճնշելու համար և աճում ու կատարելագործվում մեր ողային ու ծովային նավատորմիկների ուժը, մեր հետեակազորի, հեծելազորի ու ԲԳԿ մեքենայացված զորամասերի ուժը: Կարմիր բանակը խաղաղության բանակ և, վոր պաշտպանում և մեր սոցիալիստական շինարարությունը: Կարմիր բանակը իր հոգրություն և ուժով զսպում և իմպերիալիստական հափշտակիչների խորթակները, ահա արդեն մի շարք տարիներ ընթացքում խափանում և նոր համաշխարային սպանդի առաջացումը:

«Մենք խաղաղության կողմնակից ենք և պաշտպանում ենք խաղաղության գործը: Սակայն մենք չենք վախենում սպառնալիքներից և պատրաստ ենք հարվածով պատասխանելու պատե-

րազմի հրճիգների հարվածին»-ժողովուրդների սիրելի առաջնորդ ընկեր Ստալինի այս խոսքերն ընկած են մեր խաղաղասիրական քաղաքականություն հիմքում: ԽՍՀՄ-ի ժողովուրդների համար խաղաղ աշխատանքի հնարավորություն կարող և ապահովել միայն հոգր, անխորտակելի, բոլոր թշնամիների համար անհղ Կարմիր բանակը-մեր սահմանների հավատարիմ պաշտպանը:

Կարմիր բանակը բոլոր միջոցներն ունի նրա համար, վոր պեսզի վոչ միայն թշնամուն չթողնի անցնել մեր հոգը, այլև ջախջախի նրան նրա տերիտորիայում, ջախջախի նրան այնտեղ, վորտեղից նա կգա:

Այս միտքը պետք և արտահայտեն Կարմիր բանակի և Ռազմա-Ծովային Նավատորմի 20-րդ տարեդարձին նվիրված բոլոր միջոցառումները: Կուտնտեսականները պետք և տեսնեն, թե վորքան ուժեղ են մեր ավիացիան, մեր տանկային զորամասերը, մեր ծովային նավատորմը, վորքան լավ են նախապատրաստված կարմիր ողաչուները, ծովայիններն ու կարմիր բանակայինները:

Ղրա համար ամենահամոզիչ նյութ և հանդիսանում հենց Կարմիր բանակի մարտիկների հրամանատարների կենդանի պատմությունը: Լավ կլինի Կարմիր բանակի տարեդարձին նվիրված պատի թերթում տեղավորել մոտակա կարմիր-բանակային զորամասի կարմիր բանակայինների ու հրամանատարների, արձակուրդավոր կարմիր բանակայինների հոգվածներն ու թրդթակցությունները, ներկայումս Կարմիր բանակի շարքերում գրտընվող, կուտնտեսականների նամակներն իրենց հարազատներին:

Կարմիր բանակի և Ռազմա-Ծովային Նավատորմի տարեդարձի առթիվ լույս կտեսնեն հանրամատչելի գրքույկներ՝ լավագույն մարտիկների, հրամանատարների ու կոմիսարների մասին, վորոնք պատասխանատու մարտական խնդիրներ կատարելիս իրենց ցույց են տվել վորպես հերոսներ:

Լավագույն սահմանապահների, տանկիստների, հրետանավորների, ծովայինների, հերոս ողաչուների մասին պետք և իմանան բոլոր աշխատավորները, առաջին հերթին՝ մեր գյուղական յերիտասարդությունը: Զի վոր նա ևս շուտով պետք և մտնի կարմիր բանակի շարքերը և այնտեղ անձնվիրության ու հերոսության, դիսկալինարության և ուղիքական տեխնիկային տիրապետելու հաստատամտության նույնպիսի որինակներ ցույց տա:

Կարմիր բանակի և Ռազմա-Ծովային Նավատորմի 20-րդ

տարեգարձի տոնակատարման ժամանակ պետք է մեծ ուշադրություն դարձնել Կարմիր բանակի կենցաղի, կարմիր բանակայինի առօրյա կյանքն լուսաբանման վրա:

Անհրաժեշտ է կոլտնտեսականներին ցույց տալ, թե մեր Կարմիր բանակն ինչպեսի հիանալի ժողովրդական համալսարան է հանդիսանում: Նրա շարքերից դուրս են գալիս հազարավոր հիանալի մասնագետներ, սոցիալիստական շինարարության հազարավոր հմուտ ղեկավարներ: Կարմիր բանակից արձակուրդ ստացածները, զորացրված կարմիր բանակայիններն ու հրամանատարները, վորոնցից կլինեն յուրաքանչյուր կոլտնտեսությունում, պետք է պատի թերթի միջոցով պատմեն, թե ինչ էին իրենք ԲԳԿԻ շարքերը զորակոչվելուց առաջ և ինչ դարձան բանակում ծառայելուց հետո:

Բացի յերեկոներից, զեկուցումներից ու դասախոսություններից, կինո նկար ցուցադրումից, պատի թերթի համար հրատարակելուց և այլ նման միջոցառումներից՝ լավ կլինի տարեգարձի որվա արթիվ կազմակերպել երսկուրսիաներ ղեպի Կարմիր բանակի մոտակա զորամասը, Կարմիր բանակի տուն կամ թանգարան, կոլտնտեսություն ՊԱՋԼ-Ալիաքիմիականների միջև (հրաձիգներ, հեծկականներ և այլն) կազմակերպել զանազան մրցություններ, կազմակերպել մասնայական ռազմատեխնիկական ուսուցում:

Կարմիր բանակի և Ռազմա ծովային Նավատորմի 20-րդ տարեգարձին դիմավորելու ամենայն ձևն է՝ բարելավել ամբողջ պաշտպանական աշխատանքը և կազմակերպչորեն ամրապնդել ՊԱՋԼ-Ալիաքիմի կոլտնտեսային կազմակերպությունները: Յեթե պատի թերթի խմբկուրի և գյուղթղթակիցների նախապատրաստական խոշոր աշխատանքի հետևանքով կոլտնտեսություն մեջ տարեգարձի որը պաշտպանական խմբակներն ավելի լավ են աշխատում, յեթե տարեգարձի որը հավերժացվում է հրաձգաբանի կամ ՀՈՔՊ-ի կարիներտի բացումով, յեթե Կարմիր բանակի 20-ամյակին նվիրված յերեկոյին կարողանան մի քանի տասնյակ ՊԱՋԼ-Ալիաքիմիականներ ղեկուցել, թե իրենք տվել են պաշտպանական նշանների նորմաները (ԵՊԱՊ, ՀՈՔՊ, Վորոշիլովյան հրաձիգ և այլն), ապա գյուղթղթակիցներն իրավամբ կարող են պարծենալ իրենց աշխատանքի արդյունքներով:

ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՊՐՈՊԱԳԱՆԴԱՆ

Կոլտնտեսային ընթերցողը ռազմատեխնիկական գրականություն մասնաները ցանկանում են յուրացնել ռազմական գիտելիքները: Վստահորեն կարելի չէ ասել, Վոր ռազմատեխնիկական կամ ռազմատեխնիկական հարցերին նվիրված յուրաքանչյուր լավ դասախոսություն մեծ է ուշադիր աուդիտորիա կհավաքվի:

Կամ մի շարք ռազմական գիտելիքներ, վորոնք առաջին հերթին պետք է ուսումնասիրեն մեր կոլտնտեսականների ու կոլտնտեսականների կողմից վորոնց ուսումնասիրություն համար կոլտնտեսություններում բավականաչափ նյութական բազա կա:

Այս միտքը պարզաբանենք կոնկրետ որինակով:

Դեռ մի քանի տարի սրանից առաջ տանկի և տանկետայի ուսումնասիրությունը գյուղում մեծ գովարությունների յեր հանդիպում: Այժմ, յերը մեր յերկրում համարյա չկա մի անկյուն, վորտեղ տրակտոր չլինի, այդ գործի վրա պետք է բոլորովին ուրիշ կերպ նայել: Վերջին տարիների ընթացքում կոլտնտեսային գյուղում ստեղծվել են հազարավոր հաջողությամբ աշխատող ավտոգրահատան կային խմբակներ: Նրանց համար նյութական բազա յեն հանդիսանում բացի մակեաներից, տանկերի գծագրություններից ու սխեմաներից, նաև բազմաթիվ տրակտորներն ու ավտոմեքենաները: Այդ խմբակների ունեղներենն առավելապես կոլտնտեսային տրակտորիստներն ու շոֆերներն են, վորոնց մասնագիտությունը նրանց հնարավորություն է տալիս համեմատաբար հեշտությամբ ավտոմոբիլից ու տրակտորից անցնել տանկին ու տանկետային:

Այսպիսով, տանկիստի արվեստի պրոպագանդան և զրահատանկային խմբակների պարամունքների սխեմատիկ կազմակերպումը հանդիսանում է գյուղական ակտիվի խնդիրներից մեկը:

Այդ հարցերի վերաբերյալ կա ինչպես հանրամատ-
չելի, այնպես և ուսումնական ընդարձակ զբաղանքային
Տանկիտների խմբակների հետ միասին հարկավոր և կազմա-
կերպել ավտոմոբիլի կամ տրակտորային մատերի ուսումնասիր-
ման խմբակ: Հետագայում այդ մարդիկ Կարմիր բանակի համար
մեքենավարների հիանալի կազմեր կդառնան:

Այսպիսով, ուրիշ ռազմական մասնագիտությունների շար-
քում, վորոնք պետք է հանձնարարել մասսայականացնել դոկա-
կան յերիտասարդություն մեջ, ավտոզբաղանակային գործը
կարևոր տեղերից մեկն է բռնում: Անհրաժեշտ է ամեն կերպ պրո-
պագանդ մղել տանկի ուսումնասիրման համար, կազմակերպել
ռազմական մասնագետների դասախոսություններ, յերիտասար-
դությունը ծանոթացնել տանկի տակտիկական կիրառմանը՝ ժամա-
նակակից պատերազմում:



Սակայն ավելի մասսայական բնույթ ունեն ռազմական տեխ-
նիկային տիրապետելու ուրիշ ավելի պարզ ձևերը, առաջին հեր-
թին՝ հրաձգային սպորտը, ձիավարությունը գործը հակառակային
և հակաքիմիական պաշտպանություն կանոնների ուսումնասիրու-
թյունը, ավիացիոն սպորտի նախնական ձևերը:

Վերցնենք թեկուզ հրաձգային գործը: Հրաձգային
խմբակ կազմակերպելը դժվար չէ. ամեն տեղ կգտնվեն դիպուկ
հրաձգության մասնագետ սիրողներ, վորոնց կարելի չէ հանձնա-
րարել խմբակի ղեկավարությունը: Կգտնվեն նաև միջոցներ՝
հրաձգարան սարքելու, փոքր տրամաչափի հրացաններ, փամ-
փուշտ, նշանակետեր ձեռք բերելու համար: Վաղ միայն պատանի
տղաներն ու աղջիկները, այլև հասակավոր կոլտնտեսականներն
ու կոլտնտեսուհիները հափշտակություններ են ձեռնարկում հրա-
ցանի ուսումնասիրությունը:

Պատի թերթը, սակայն, պետք է նախադասացնի դեպի
այդ գործը թեթևամիտ վերաբերմունք ունենալուց: Շատ հաճախ
մեզ մոտ կազմակերպվում են խմբակներ, վորոնց մեջ յերիտա-
սարդությունն արագ յուրացնում է հրաձգային նախապատրաս-
տության առաջին աստիճանը, ընդհուպ մինչև վորոշիլովյան հրա-
ձգի կոչման նորմաներ հանձնելը: Սակայն այդ նորմաները
հանձնելով՝ մարդիկ հաճախ դադարում են պարապել և խմբակը
ցրվում է:

Հարկավոր է հրաձգային կազմերի պատրաստման գործի
բոլորովին այլ դրվածք: Առաջին աստիճանի վորոշիլովյան հրա-
ձիգը՝ այդ միայն փոքր տրամաչափի հրացանի հրաձգարանի հրա-
ձիգ է: Նա դեռևս չգիտե մարտական հրացանը և չի կարողա-
նում կրակել դաշտային պայմաններում: Նա անցել է միայն
առաջին աստիճանը, շատ կարևոր, հրաձգային նախապատրաս-
տություն անհրաժեշտ աստիճանը, սակայն դեռ լիակատար՝ մար-
տիկ չի դարձել:

Այդպիսի հրաձիգը պետք է շարունակի սովորել: Միայն մըշ-
տական վարժությունները, հրաձգային նախապատրաստության
հետևյալ՝ ավելի բարձր աստիճանին անցնելը նրան կդարձնեն
լավ հրաձիգ և դուրս թե սնայպեր կամ հրաձգային սպորտի վոր-
պետ:

Առաջին աստիճանի վորոշիլովյան հրաձիգի նշանակիւրներից
պետք է կազմակերպվի կոլտնտեսային հրաձիգների խմբակ, վորը
պետք է անընդհատ կատարելագործվի, դուրս գա միջկոլտնտե-
սային մրցությունների:

Պատի թերթի և ՊԱՀԼ-Ավիաբիմի կազմակերպությունների
խնդիրն է՝ պրոպագանդա մղել հրաձգային սպորտի հենց այդ-
պիսի դրվածքի համար, չվազել քանակի հետևից, այլ ձգտել հրա-
ձիգների պատրաստության ավելի բարձր վորակի, ձեռք բերած
հաջողությունների ամրապնդմանը: Անհրաժեշտ է ապահովել բար-
ձր կատեգորիայի հրաձիգների պատրաստությունը, նրանց ան-
ընդհատ վարժությունները և լավ հրաձգային խմբի կազմակեր-
պումը:



Կոլտնտեսային յերիտասարդության ռազմական ուսուցման
մյուս մասսայական ձևն է հանդիսանում հեծելակային ըս-
մյուս մասսայական ձևն է հանդիսանում այդ տեսակին, առանձ-
պորտը: Պաշտպանության աշխատանքի այդ տեսակին, առանձ-
նապես լայն տարածում է ստացել ԽՍՀՄ հարավային տափա-
տանային շրջաններում: Գյուղերում ու ստանիցաներում կազմա-
կերպվել են վորոշիլովյան հեծելակային բազմաթիվ կոլտնտե-
սային խմբակներ ու ակումբներ:

Խոչնչ է անհրաժեշտ իմանալ պատի թերթի խմբագրին, գյուղթղ-
թակցին, կոլտնտեսության պաշտպանական աշխատանքի ղեկա-
վարին՝ այդ գործի կազմակերպման առանձնահատկությունների

մասին: Վորոշիլովյան հեծելակներ պատրաստելու վերաբերյալ կոլտնտեսություններում շատ ուսումնական պիտույքներ կան: ՊԱՋԸ-Ավիաքիմի հենարոնական խորհրդի մի շարք հրատարակություններում մանրամասն ցուցումներ են տրված ապագա հեծելակների պատրաստման ծրագրի ու մեթոդիկայի մասին: Հրատարակված է նաև վորոշիլովյան հեծելակների կոլտնտեսային ակումբի որինակելի կանոնադրություն:

Մի շարք կոլտնտեսություններում աղավաղված է հենց վորոշիլովյան հեծելակ կոչումը: Յերբեմն այդ կոչումն կրում են այնպիսի մարդիկ, վորոնք նոր են սկսել սովորել հեծելակային գործը և վոչ մի նորմա չեն տվել: Տեղ-տեղ հեծելակների ջոկատներն ամբողջապես բաղկացած են վոչ ՊԱՋԸ-Ավիաքիմի անդամներից, ըստ վորում, ջոկատների անդամները վոչինչ չգիտեն նորմաների մասին: Քիչ չի պատահում, վոր կոլտնտեսականները սովորում են միայն ձիավարություն առանց բան իմանալու ձիու խնամքի մասին, չսովորելով հրաձգություն, հակազդի գործածություն, չսովորելով այն ամենը, ինչ անհրաժեշտ է իմանալ կարմիր հեծելակին:

Յուրաքանչյուր պատի թերթի պարտականությունն է՝ հետև-վողական պայքար մղել այդպիսի աղավաղումների դեմ: Հարկա-վոր է անողքարար մերկացնել ամեն տեսակ սնապարծություն, աղմկարարություն, համարյա ամեն մի ձին նստել իմացողի վորո-շիլովյան հեծակի հայտարարելու յիրեվույթ:

Պատի թերթը պետք է պարզաբանի, վոր չկա ու չի կարող լինել կոլտնտեսային հեծելակային խմբակ, ակումբ, հեծելակների ջոկատ՝ առանց ճշտորեն կազմակերպելու վորոշիլովյան հեծելակ-ների այն նորմաների ուսուցում, վոր հաստատված են Ոորհր-դային Միության մարշալ ընկ. Բուդյոննու կողմից: Պատի թեր-թում պետք է ագիտացիա մղել, վորպեսզի բոլոր կոլտնտեսային հեծելակները մտնեն ՊԱՋԸ-Ավիաքիմի մեջ և, վոր գլխավորն է, հարկավոր է հեծելակների ջոկատի համար գտնել փորձված, գործն իմացող ղեկավար՝ հենց իրենցից, ձիավարության սպորտը սիրող կոլտնտեսականներից, գոմապահներից, նախկին հեծելակ-ներից:

Հարկավոր է հիշել, վոր հեծելակների խմբակի կազմակեր-պումն անքակտելիորեն կապված է կոլտնտեսության մեջ ձիու խնամքի լավ գրվածքի հետ: Առաջինը, վոր պետք է սովորեն կարմիր հեծելակները, այդ հոգատար վերաբերմունքն է դեպի

ձին-նրան խնամելու, կերակրելու, կանոնավոր պահպանելու կա-րողությունը: Դրա համար ել պատահական չէ, վոր մեր առաջա-վոր կոլտնտեսություններում լայն ծավալ են ստացել, այսպես կոչված, ուղմականացված ախոռները:

«Ռազմականացված ախոռ» — այդ որինակելի, կուլտուրա-կան ձևով կահավորված կոլտնտեսային ախոռ է, վորտեղ ձիերն ամրացված են վորոշակի ձիապանների, վորտեղ կարգավորված է անասնաբուժական հսկողությունը ձիերի նկատմամբ և նրանց կերակրման, ջրելու, աշխատացնելու խիստ ուժեղ է հաստատված: Վորոշիլովյան հեծելակի կոչման նորմաների հիմնական պահանջ-ներից մեկն է կարողանալ խնամել ձիուն և կանոնավոր վար-վել նրա հետ: Դրան հետևելու են մնացած պահանջները-կարո-ղանալ թամբել, ձի հեծնել, ուսումնասիրել թրահատման, ձիա-խաղացության կանոնները և այլն:

Հարկավոր է ձիու խնամքի վերաբերյալ պլակատներ ձեռք բերել, յերիտասարդությունը ծանոթացնել վորոշիլովյան հեծե-լակի նորմաներին, պատի թերթում տեղավորել անասնաբուժի լավագույն ձիապանների, նախկին կարմիր բանակային հիծելա-կների հոգվածները:



Պաշտպանական աշխատանքի համար մեծ նշանակություն ունեն հակառակորդին և հակաքիմիական պաշտպանու-թյունը (ՀՈՔՊ): Ֆաշիստական հափշտակիչները լայնորեն կիրառում են ողային և ողաքիմիական հարձակումը խաղաղ բնակավայրերի վրա: ԽՍՀՄ յուրաքանչյուր քաղաքացու խնդիրն է՝ կարողանալ պաշտպանվել թշնամու ողային հարձակումից:

«Պատրաստ ՀՈՔՊ-ի» կրճառնշանի, նորմաների հանձնում, ինքնապաշտպանության խմբակների կազմակերպում, հակառա-յին և հակաքիմիական պաշտպանության ջոկատների կամ քիմիա-կան ջոկատների կազմակերպում-ահա սրանք են այդ աշխա-տանքի ձևերը: Հարկավոր է պատի թերթում հանրամատչելի հոգվածներ տեղավորել հակառակային պաշտպանության մասին և դյուղատնտեսության մեջ քիմիական նյութեր կիրառելու վերա-բերյալ: ՊԱՋԸ-Ավիաքիմի քիմիական ջոկատների աշխատանքը գյուղում կրկնակի ոգուտներ է տալիս, նրանք պատրաստվում են հակառակային և հակաքիմիական պաշտպանություն և միա-ժամանակ խոշոր աշխատանք են կատարում քիմիական պարար-

տանյութը գործադրելու և գյուղատնտեսութեան վնասատուներին վնասները ուղղութեամբ:

Պատի թերթերը և գյուղթղթակիցները պետք է կոլտնտեսութեաններում ագրոտացիա մղեն հենց այդպիսի ջոկատներ կազմակերպելու համար: Քիմիական ջոկատը գյուղում պաշտպանական աշխատանքի լավագույն ձևերից մեկն է: Այդպիսի քիմիական ջոկատի անդամները վոչ միայն սովորում են հակառակին ու հակաքիմիական կանոնները, այլև հրաձգային շարային ու տակտիկական պատրաստութեան են ձեռք բերում: Բացի այդ, ինչպես արդեն ասացինք, նրանք տնտեսական մեծ ոգնութեան են ցույց տալիս կոլտնտեսութեանը:

Դրա համար կարևոր է, վոր պատի թերթն իր կոլտնտեսութեան մեջ այդպիսի քիմիական ջոկատների նախաձեռնողը դառնա և լայնորեն լուսաբանի նրա աշխատանքը: Կոլտնտեսութեան վարչութեանը սիրով կընդառաջի այդպիսի նախաձեռնութեանը: Վարչութեանը կարող է քիմիական ջոկատի հետ պայմանագիր կնքել, վորի համաձայն ջոկատը վորոշ խնդիրներ կվերցնի իր վրա (առնետներ, մկներ, թրթուռներ, վոչնչացում, սերմի ախտահանում և այլն), իսկ վարչութեանը դրա գիմաց քիմիական ջոկատին կապահովի գործիքներով, հակազագերով, հրացաններով, ուսումնական գրականութեամբ:

Քիմիական ջոկատների համար հրատարակված է Պոսպելովի և Յենյուկովի «ՊԱՋԼ-Ավիաքիմի քիմիական ջոկատը» անունով ուսումնական ձեռնարկը, վորի մեջ արժեքավոր նյութեր են տրված պարարտացման մասին, դաշտերի ու բանջարատնոցների վնասատուների դեմ պայքարելու մասին, քիմիական մարտական նյութերի մասին: Հարկավոր է ամեն կերպ պրոպագանդա մղել այդ գրքի ուսումնասիրութեան համար: Այդ գիրքը պետք է լինի յուրաքանչյուր խրճիթ-ընթերցարանում:

Քիմիական ջոկատները շատ շրջանների, մասնավորապես Ուկրաինայի կոլտնտեսականների մեջ, արդեն մեծ հեղինակութեան են նվաճել: Առանձին քիմիական ջոկատներ կարողացել են փրկել իրենց կոլտնտեսութեանների մի քանի տասնյակ հեկտար ցանքերը, վորոնք վարակված են յեղել վնասատուներով:

Սակայն, բացի քիմիական ջոկատների կազմակերպումից, ՀՈՒՔՊ-ի հարցերի պրոպագանդան պետք է ընդգրկի կոլտնտեսականների լայն մասսաներին: Կոլտնտեսութեան մեջ պետք է սիս-

տեմատիկ կերպով աշխատի «Պատրաստ ՀՈՒՔՊ-ի» կրճառանդների նորմաները հանձնելու համար նախապատրաստվող խմբակը (գյուղական բնակչութեան համար կան հատուկ նորմաներ):



Ավիացիոն տեխնիկայի պրոպագանդան ևս պետք է տեղ դնի պատի թերթի պաշտպանական աշխատանքում: Մեր յերիտասարդութեանը ջերմորեն հետաքրքրվում է ավիացիայով, ողային նավատորմի հերոսներով, ձգտում է դեպի ավիացիայի դպրոցները: Ավիացիայի հարցերի վերաբերյալ ընդարձակ գրականութեանը գոյութեան ունի, պարբերական մամուլ-թերթերը ժուռնալները—մեծ քանակութեամբ նյութ են տալիս ավիացիոն տեխնիկայի նվաճումների, խորհրդային ողաչունների հերոսական թոխչաների վերաբերյալ:

Ավիացիոն պատրաստութեան առաջին աստիճաններից մեկը հանդիսանում է պլանյորի դմբ—առանց մոտոռի ապարատներով, պլանյորներով թռչելը: Մի շարք կոլտնտեսութեաններում արդեն գոյութեան ունեն պլանյորային խմբակներ: Կան ՊԱՋԼ-Ավիաքիմի կոլտնտեսային կազմակերպութեաններ, վորոնք արդեն մի քանի պլանյոր ունեն: Յերիտասարդութեանը հափշտակութեամբ է ուսումնասիրում այդ գործը: Հենց պլանյորային խմբակներում են, վոր աճում են այերողութեանների ապագա ուսանողները: Պլանյորով նախապատրաստութեան ձեռք բերելն ոգնում է ստուգելու այս կամ այն պատանու կամ աղջկա ընդունակութեանները, թե վրճան նրանք պիտանի չեն թոխչային գործի հետագա ուսման համար:

Մեզ մոտ տարածված է նաև պարաշյուտիզմը: Վերջին տարիների ընթացքում կոլտնտեսութեաններում ու խորհտնտեսութեաններում հարյուրավոր պարաշյուտային աշտարակներ են կառուցվել: Ապագա պարաշյուտիստի սկզբնական պատրաստութեանը ձեռք է բերվում պարաշյուտային աշտարակի վրա: Աշտարակը հետաքրքրական է շատ ոգտակար ատտրակցիոն է հանդիսանում կոլտնտեսային ակումբում, պաշտպանութեան տանը կամ խրճիթ-ընթերցարանում: Այդ պարաշյուտիզմի տեխնիկային տի-

բաղադրված մասնաշաղկապի ազդեցության մեթոդ է հանդիսանում:

Պատի թերթը կարող է նախաձեռնություն վերցնել՝ շրջապատի կոլտնտեսությունների միջոցներով այդպիսի աշտարակ կառուցելու համար: Ամենապարզ պարաշյուտային աշտարակի որինակելի նախահաշիվներ ու գծադրություններ կարելի չէ դուրս գրել Մոսկվայից (ԽՍՀՄ ՊԱՋԸ-Ավիաքիմի Կենտրոնական Խորհրդի բարձրագույն պարաշյուտային դպրոցից):

Պատի թերթը պրոպագանդայի նախաձեռնություն պետք է վերցնի նաև ապագա ավիատորներին՝ ավիոմոդելիստների ամենայն հնարավոր սերնդի խմբակներ կազմակերպելու ուղղությամբ: Այդպիսի խմբակները, վորոնց անդամները լինում են պիոներներն ու դպրոցականները, վորպես կանոն կազմակերպվում են գաղափարներին կից: Պատի թերթի խմբկուրը խրճիթ-ընթերցարանի հետ միասին կարող է ոգնել այս գործին, պրոպագանդա մղելով ավիոմոդելիզմի գրականության վերաբերյալ, ցուցադրելով ինքնաթիռների ամենապարզ մոդելներ, վորոնք կարելի չէ դուրս գրել տեղական ՊԱՋԸ-Ավիաքիմի մատ-բաժնից, իր յերեկույթներին հրավիրելով այն դպրոցների ավիոմոդելիստներին, վորտեղ արդեն գոյություն ունեն ավիոմոդելիստների խմբակներ:

Վերջապես մի շարք կոլտնտեսություններում, վորտեղ արդեն ավիացիայի պրոպագանդայի այդպիսի սկզբնական աշխատանք է կատարվում, պետք է բացատրական աշխատանք ծավալվի այնքան կուլմբների և ավիոցիոն դպրոցների թուխջային խմբակների կոմպլեկտավորման կարգի մասին: Շատ յերիտասարդ կոլտնտեսականներ և կոլտնտեսուհիներ առանց արտագրությունից կտրվելու հաջողությամբ պարագում են մեր շրջանային ու մարզային այնքան կուլմբներում: Քիչ չեն այն կոլտնտեսականները, վորոնք արդեն ավարտել են այդ ուսումը և դարձել ողաչու:

Պատի թերթի խմբկուրը լավ կանի, յեթե իր նախաձեռնությամբ հրավիրի ՊԱՋԸ-Ավիաքիմի ակտիվի և ավիացիոն գործըն ուսումնասիրելու ցանկություն ունեցող բոլոր կոլտնտեսականների հատուկ խորհրդակցություն: Այդ խորհրդակցությունում պետք է պարզել, թե հատկապես ինչպիսի ավիոցիոն խրճապակ պետք է կազմակերպել կոլտնտեսության մեջ: Այնուհետև

թերթը, խորհրդակցությունը մասնակցողների հետ միասին, պետք է պայքարի ընդունված վորոշումների կատարման համար, պայքարի, վորպեսզի աշտարակ կառուցվի, միջոցներ բաց թողնվի, սովորելու ուղարկվի թեկուզ մեկ ՊԱՋԸ-Ավիաքիմիական, վորը հետագայում կդառնա կոլտնտեսային խմբակի ինքնուրույն ղեկավար:

Այն ողմական մասնադիտությունների շարքում, վորոնց ուսումնասիրությունը խորհուրդ է տրվում գյուղական յերիտասարդությունը, անհրաժեշտ է հիշատակել նաև կարճալիք ողիտկալը: Կարճալիք ողիտկալավորը այդ այն մարդն է, վորը լավ տիրապետում է ողիտղրամի հեռավոր ընդունման և հաղորդման թեորիային ու պրակտիկային:

Կարճալիք ողիտ սիրողը արժեքավոր անդամ է մեր արկտիկական եքսպեդիցիաների, պիտանի մասնաղետ մարդիկ Կարմիր բանակի համար: Ամենուրեք նրա համար աշխատանք կգտնվի-կոլտնտեսային ակումբների և կարմիր անկյունների ողիտֆիկացման ուղղությամբ, դաշտակայանների ու բրիգադների հետ շրջանային կազմակերպությունների և այլնի հետ ողիտ-կապ հաստատելու ուղղությամբ և այլն:

Ծովին և նավարկելի գետերին մոտիկ վայրերում պետք է կիրառվի նաև կոլտնտեսային յերիտասարդության ողմածովային նախապատրաստությունը: Մեր յերկիրն ունի խոշոր և շարունակ աճող ծովային նավատորմ: «Խորհրդային հզոր պետությունը պետք է ունենա իր շահերին համապատասխան, մեր մեծ գործին արժանի ծովային ու ովկիանոսային նավատորմիդ»: (ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի առաջին նստաշրջանում ընկ: Մոլոտովի յեկույթից): Ռաղմական ու քաղաքացիական, ծովային և գետային նավատորմը տարեց-տարի մեծ ու վործված կադրերի ավելի մեծ պահանջներ է առաջադրում:

Մեր յերիտասարդությունը մակույկներում ու նավակներում ստանում է ողմածովային նախնական պատրաստություն: Այդ գործի ճիշտ կազմակերպման դեպքում, ծովային ծառայություն և նավարկության բարդ կանոնների ուսումնասիր-

ման պայմաններում ռազմածովային խմբակի անդամներից աճում են լավ ծովայիններ: Հիշենք, վոր մեր նախազինակոչային կոլտընտեսականները շատ անգամ են կատարել հանրահայտնի նավարկութուններ՝ հազարավոր կիլոմետրերով, նավակներով ու բայդարկաներով: Այդ արշավների մասնակցողներն աճել են նախնական ծովային խմբակներում և ՊԱԶԸ-Ավիաքիմի Ռազմածովային ուսուցման կենտրոնում:



Կոլտնտեսային յերիտասարդութունը հաջողակությամբ և զբաղվում ֆիզկուլտուրայով:

Բավական է, վոր կոլտնտեսութուններում մի փորձված ֆիզկուլտուրնիկ կազմակերպիչ յերեմա և տասնյակներով ու հարյուրներով կոլտնտեսականներ ու կոլտնտեսուհիներ վոչ միայն հետաքրքական բովանդակալից հանգիստ են ստանում, այլև սիրով ձեռք են բերում բազմաթիվ ոգտակար գիտելիքներ: Ֆիզկուլտուրան յերիտասարդությանը յերկրի պաշտպանության գործին պատրաստելու լավագոյն միջոցներից մեկն է:

Կոլտնտեսության մեջ ֆիզկուլտուրայի աշխատանքը կազմակերպելու համար վորևե իռոշոր «կապիտալ» չի պահանջվում, իսկ փոքրիկ միջոցներ այդ գործի համար կոտնի ամեն մի կոլտընտեսության վարչութուն: Ֆիզկուլտուրային աշխատանքի համար համարյա ամբողջ կահավորութունը կարելի յե ստեղծել կոլտնտեսութունում, հենց իրենց՝ ֆիզկուլտուրնիկների ուժերով:

Կարելի յե գործին սկիզբ դնել ֆիզկուլտուրայի ամենապարզ վարժութուններով (մարզանք, ազատ շարժումներ, վազք), շարային պարապմունքներով, խաղերով, ետաաֆետներով, վազքով՝ աղբեղքների վրայով: Դժվար չե սեփական ուժերով այդպիսի «արգելքներ» պատրաստել 2—2 և կես մետր բարձրությամբ ցանկապատ, փշալարի ցանկապատ՝ տակովն անցնելու համար (կամ փայտե ձողաշար նույն նպատակի համար) փոսեր՝ թռիչքի համար, գերաններ՝ սյուների կամ իշտոնուկների վրա, բարյերներ: Հենց այստեղ ել ստեղծվում և մարմնամարզական ավան՝ կահավորված տուրնիկով, կախած պարաններով, տրապեզիաներով, ողերով և այլն:

Այդպիսի ֆիզկուլտուրային ավանում աստիճանաբար կա-

տարվում «ՊԱՊ»-ի (Պատրաստ աշխատանքի և պաշտպանության) կրճառանշանի նորմաների հանձնում: Յերիտասարդութունը սովորում և զինվորական շարային վարժութուններ, նոնակ նետել: Զուգընթացաբար տեղի յեն ունենում ժամանցներ, խաղեր, պարեր: Ունենալով այդպիսի «ավան»՝ կարելի յե կազմակերպել ֆիզկուլտուրնիկների շքերթներ, սպարտակիադոններ, մրցութուններ:

Պատի թերթի խոդիրն և՛ ակտիվորեն և որբստորե ողնել կոլտնտեսականների ռազմաֆիզկուլտուրային դաստիարակության գործի կազմակերպմանը:



Բազմազան ու լայն է ռազմատեխնիկական պրոպագանդայի բովանդակութունը: Մենք այս բոլոր թեմաները թվեցինք նրա համար, վորպեսզի պատի թերթի խմբագիրը և գյուղթղթակիցները գիտենան, թե իրենք ինչի վրա պետք է կենտրոնացնեն իրենց ուշադրութունը: Տեղի պայմանները, տվյալ շրջանի տընտեսական ու աշխարհադրական առանձնահատկութունը ցույց կտան, թե նրանք կոնկրետ կերպով ինչից պետք է սկսեն գործը: Հարկավոր չե ցրվել, հարկավոր չե հապճեպ կերպով շատ խմբակներ կազմակերպելու հետեվից ընկնել: Ավելի լավ է սկզբում ուշադրութունը կենտրոնացնել պաշտպանական աշխատանքի մեկ-յերկու ձևերի վրա, դրանց շուրջը բանիմաց պրոպագանդա ծավալել, պաշտպանական աշխատանքի կազմակերպման համար ոգտագործել գյուղի ամբողջ ակտիվը: Դրա արդյունքը շատ կարտահայտվի: Կոլտնտեսության մեջ կաճի պաշտպանության նոր ակտիվի, վորի ոգնությամբ հետագայում արդեն դյուրին կլինի ծավալել նաև ուրիշ պապշտպանական հետաքրքիր աշխատանքներ:

ԱՇԽԱՏԱՆՔԸ ՆԱԽԱԶԻՆԱԿՈՉԱՅԻՆՆԵՐԻ ՀԵՏ

Նախագինակոչային հասակի կոլտնտեսային յերիտասարդութիւնն ահա թե առաջին հերթին ուժհետ պետք է դատարկեցական խոշոր աշխատանք տարվի: Այս տարի յուրաքանչյուր կոլտնտեսութիւնից տասնյակներով յերիտասարդները կմտնեն Կարմիր բանակի շարքերը: Այնտեղ նրանք ձեռնամուխ կլինեն արագ և լավագոյն ձևով տիրապետելու ուղղական բարդ տեխնիկային, նրանք պորձ կունենան զնգացրի հետ, տանկի հետ, հրանոթների հետ, ավտոգրահամեքենաների հետ, կամ ավիացիոն մոտորների հետ, ժամանակակից ռադիոտեխնիկայի սարքերի կամ ծովային նավատորմի նուրբ և ճշգրիտ սարքավորումների հետ: Այս բոլորի համար պետք է նախապատրաստվի:

Կարմիր Բանակին հարկավոր է զբաղեւ, քաղաքականապես դարգացած, կուլտուրական յերիտասարդ մարտիկ: Կիսադրագետ մարդուն քաղաքականապես հետամնաց և ուղղական տեխնիկային բոլորովին անծանօթ մարդուն անհրաժեշտ կլինի շատ ավելի յերկար ժամանակ կորցնել Կարմիր բանակի իսկական վարակ յալ մարտիկ դառնալու համար: «Զինվորական ծառայութիւնը Բանվորա—գյուղացիական Կարմիր բանակում ԽՍՀՄ քաղաքացիների պատվովոր պարտականութիւնն է» այսպես և զրկած Ստալինյան մեծ Մահմանադրութեան մեջ: Զինակոչայինը պետք է նախապատրաստվի իր այդ պատվովոր պարտականութիւնը կատարելու համար:

Մեր ամբողջ գյուղական հասարակայնութիւնը, գյուղի բոլոր հասարակական կազմակերպութիւնները և նրանց մէջ պատի թերթն ու գյուղթղթակիցները պատասխանատուութիւն են կրում սոցիալիստական հայրենիքի տղապա պաշտպանների պատրաստութեան վերակի համար:

Դժբախտարար, դեռ շատ հաճախ, մեր շատ կազմակերպու-

թիւնները զինակոչայինն նախապատրաստելու մասին սկսում են մտածել տառացիորեն զինակոչից մի քանի որ առաջ միայն: Պետք է վճռականորեն հրաժարվել այդպիսի կամպանիականութիւնից:

Կարեւոր է, վոր պատի թերթը զինակոչից դեռ շատ առաջ լուսարանի, թե նախագինակոչայիններին ինչպես են պատրաստվում իրենց պատվովոր պարտականութեան կատարման համար:

Հարկավոր է պատի թերթում լուսարանել նախագինակոչայինի քաղաքական ու ուղղական պատրաստութիւնը. արդէրք նախագինակոչայինը յեղել է ՊԱՋԸ—Ավիաքիմի ուսուցման կետում: Դարձել է վորոշիւրովան հրաձիգ, զրազմում և ֆիզկուլտուրայով: Հնարավոր է, վոր կոլտնտեսութեան նախագինակոչայիններն իրենք ցանկութիւն հայտնեն մտնելու Կարմիր բանակի հատուկ զորամասերը, նավատորմը, զրահատանկային մասերը: Ի՞նչ է արել կոլտնտեսային հասարակայնութիւնը նախագինակոչայինների այդ ցանկութիւնն իրազործելուն ոգնելու համար:

Պատի թերթի խնդիրն է՝ յուրաքանչյուր կոլտնտեսականի, կոլտնտեսութեան վարչութեան, կոլտնտեսային բոլոր հասարակական կազմակերպութիւնների գիտակցութեանը հասցնել, վոր Կարմիր բանակի շարքերին որինակելի կերպով նախապատրաստված, քաղաքականապես զբաղեւ համալրում տալն ամբողջ կոլտնտեսութեան պատվի դործն է:

Պատի թերթը բոլոր կոլտնտեսականների ամբողջ կոլտնտեսային հասարակայնութեան ուշադրութիւնը պետք է բնվեռի զինակոչի վրա, բնդգծելով, վոր զինակոչայիններին ճանապարհ դնելը, դա ամբողջ կոլտնտեսութեան համար տոն է: Թող զինակոչայինների ծնողները թերթին դրեն, թե իրենք Կարմիր բանակի համար ինչպիսի համալրում են աճեցրել: Յանկալի յե, թերթում տեղավորել լավ զինակոչայինների և նրանց ծնողների լուսանկարները, այս մարդկանց պետք է շրջապատել ուշադրութեամբ ու հարգանքով:

Նախագինակոչայինների անդրադիտութեան ու կիսադրագիտութեան վերացումն առաջնակարգ կարևորութիւն ունեցող խնդիր է: Տարեց—տարի մեղ մոտ պակասում է այն յերիտասարդութեան թիւը, վորը սիստեմատիկաբար ընդհանուր կրթութիւն չի ստացել: Այսուամենայնիւ, դեռես նույնիսկ մեր յերիտասարդութեան մեջ, հանդիպում են կիսադրագետներ: Նրանց հետ խոշոր աշխատանք պետք է կատարել:

Սովորաբար նախադինական շինությունների հետ պարագլու գործի մեջ են քաշվում տեղական դպրոցների ուսուցիչները: Այժմ կոլտնտեսային գյուղում կարելի չէ նաև այլ պրոֆեսիայի շատ մարդիկ գտնել, փորոք սիրով կստանան նաև այդ պատվավոր հասարակական պարտականությունը:

Նախադինական շինություն միայն լավ կարգավ ու զբաղեցրած զբոսայգի է, փոր պետք է սովորեցնել: Պարտադիր են նաև քաղաքական պարագլուները: Կարմիր բանակի ապագա մարտիկը պետք է իմանա Ստալինյան Սահմանադրությունը, պետք է պատկերացում ունենա սոցիալիստական շինարարության խնդիրների մասին, ԽՍՀՄ-ի միջազգային դրություն մասին, մեր Կարմիր բանակի մասին:

Իրա հետ միասին նախադինական շինությունները պետք է տարբերակեն, ռազմական նախապատրաստություն ձեռք բերեն: Յուրաքանչյուր նախադինական շինություն պետք է աշխատի ստանալ «Պատրաստ աշխատանքի և պաշտպանության» կրքանշանը, պետք է դանա դիպուկ փորձելովյան հրաձիգ և այլն: Ամբողջ պաշտպանական պրոպագանդան գյուղում, ռազմական տեխնիկայի պրոպագանդան առաջին հերթին պետք է ընդգրկի նախադինական շինություն հասակի յերիտասարդությունը:

Կան մի շարք հարցեր, փորոք նկատմամբ անհրաժեշտ է բացատրական լայն աշխատանք, թվենք թեկուզ պարտադիր զինվորական ծառայություն ունենալ ԽՍՀՄ-ում: Հարկավոր է կազմակերպել այդ ունենքի ուսումնասիրությունը, նրա պրոպագանդան պատի թերթում:

Նախադինական շինություններին պետք է մանրամասնորեն պատմել կարմիր բանակայինների ընտանիքներին տվող արտոնություններին մասին, զինվորական ծառայությունը կատարելու կարգի և նրա ժամկետների մասին՝ նավատորմում, սահմանապահ զորամասերում, ավիացիայում:

Կոլտնտեսային յերիտասարդությունը մեծ հետաքրքրություն է ցույց տալիս զեպի ռազմական դպրոցները: Անհրաժեշտ է թերթում տեղավորել այդ դպրոցները մտնելու կանոնները, բացատրություն տալ, թե այս կամ այն ռազմական դպրոցի ուսանողն ինչքան ժամանակից հետո ինչ կարող է դառնալ:

Հարկավոր է խրճիթ-ընթերցարանում Կարմիր բանակի զորամասերի տեսակների մասին նախադինական շինությունների համար կազմակերպել հատուկ դասախոսություններ: Հետևալը, հեծելա-

զորը, զրահատանկային զորամասերը, ինժեներա-սակրավոր, հրետանային զորամասերը, կապը, ավիացիան, ռազմա-ծովային նավատորմի յենթամասերը՝ այս ամենը հետաքրքրում են յերիտասարդությունը: Նախադինական շինությունը կարող է նախորդ պատրաստվել փորձ մասնագիտություն համար:

Ցանկալի չէ, այս բոլոր հարցերի վերաբերյալ պատի թերթում սիստեմատիկաբար տեղեկատու հոդվածներ տալ: Այդ դեպքում չէ կազմակերպել: Ամեն տարի մեզ մոտ հրատարակվում են (և 38 թվին էլ հրատարակվելու յեն) «Նախադինական շինությունների հուշատետր», «Ռազմական դպրոցները մտնողի հուշատետր» և այլ բրոշյուրներ: Հարկավոր է պատի թերթերում և զինակոչին ներկայացնել հատուկ ցուցակներում քաղվածքներ տեղավորել այդ հրատարակություններին:

Մի շատ կարևոր հարցի վրա, դժբախտաբար, յերթին շատ քիչ ուշադրություն է դարձվում: Խոսքը վերաբերում է նախադինական շինությունների յերգերին:

Հարկավոր է կոլտնտեսային յերիտասարդությանը ծանոթացնել նոր յերգերին, մասնավորապես Կարմիր բանակի հիանալի յերգերին: Խրճիթ-ընթերցարանին կից յերգի ու յերաժշտական խմբակները պետք է իրենց աշխատանքի մեջ ներգրավեն բոլոր նախադինական շինություններին և նրանց սովորեցնեն կարմիր բանակայինների սքանչելի յերգերը-յերգեր՝ մեր հայրենիքի մասին, քաղաքացիական կռիվների հերոսների մասին, սահմանապահ մարտիկների մասին: Հարկավոր է պատի թերթում տեղավորել այդ յերգերի տեկստեր:

ՊԱՅՔԱՐ ՊԱՋԸ-ԱՎԻԱՔԻՄԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԱՄՐԱՊԵՒՄԱՆ ՀԱՄԱՐ

ՊԱՋԸ-Ավիաքիմը — այդ խորհրդային հայրենասերների կամավոր մասսայական կազմակերպությունն է։ Նա իր շարքերում միլիոնավոր խորհրդային քաղաքացիներ ունի։ Յերկրի բոլոր անկյուններում կան ՊԱՋԸ-Ավիաքիմի կազմակերպություններ, վերոնք իրենց առաջ խնդիր են դրել նախապատրաստել ու դաստիարակել մեր հայրենիքի՝ սոցիալիզմի դործին նվիրված պաշտպաններ։

ՊԱՋԸ-Ավիաքիմը կազմակերպչորեն համախմբում է ամենալայն ժողովրդական շարժումը։ Այդ շարժման դրոշմ է հանդիսանում հայրենիքի ջերմ սերը, ժողովրդական մասսաների ձգտումը ամրապնդելու ԽՍՀՄ պաշտպանունակությունը։

ՊԱՋԸ-Ավիաքիմի կազմակերպությունը մեր յերկրում վիթխարի ուժ է հանդիսանում։ Նա ակնառու կերպով ցույց է տալիս, վոր վտանգի բոլորին Խորհրդային յերկրի բանվոր դասակարգը գլուղացիությունն ու ինտելիգենցիան ընդունակ են թըշնամու դեմ ուղարկելու այնքան հավատարիմ ու անվեհեր մարտիկներ, վորքան Ֆաշիստական զինվորականությունը յերազում անգամ չի կարող տեսներ։

Քաղաքի ու գյուղի աշխատավորական նույն մասսաները մտնում են, ՊԱՋԸ-Ավիաքիմի կազմակերպությունները, վորպեսզի ավելի լավ նախապատրաստվեն իրենց սոցիալիստական հայրենիքի պաշտպանությանը։ Խորհրդային հայրենասերները իրենց պաշտպանական կազմակերպություններին ավելի բարձր պահանջներ են տալիս և նրանք ՊԱՋԸ-Ավիաքիմի ղեկավարությունից պահանջում են կոնկրետ ցուցումներ, թե ինչպես սովորեն յերկրի պաշտպանությանն ոգտակար այս կամ այն գործը,

պահանջում են վարակյալ մասնադետ հրահանգիչներ, ուսումնասիրան պրտույթներ, կազմակերպչական նախաձեռնություն։

Արդյոք պաշտպանության այդ ենտուգիաստների աճող պահանջները բավարարում են ՊԱՋԸ-Ավիաքիմի կազմակերպություններն ու նրանց ղեկավարները։ Դժբախտաբար վնչ ամեն անգամ։

Դեռ հաճախ մեր ՊԱՋԸ-Ավիաքիմի կազմակերպությունները հետ են մնում աշխատավորության ակտիվության աճումից, չեն կարողանում բավարարել նրանց պահանջները։ Հաճախ նրանք չեն հասկանում իրենց դերը վորպես ուսուցման կազմակերպիչներ, վորպես մասսաների քաղաքական դաստիարակներ։

Այդ տեսակետից քիչ վնաս չեն հասցրել ՊԱՋԸ-Ավիաքիմի և նույնիսկ նրա ղեկավար պոստերը խցկված Ֆաշիզմի տրոցկիստական-բուխարինական լրտեսների, զինվրսատները և վնասաբարները։ Ֆաշիստական պետությունների կոռուպտություններն ու գլխավոր շտարներն իրենց հետախույզների առաջ թընդիր են դնում խցկվել ՊԱՋԸ-Ավիաքիմի կազմակերպությունների մեջ և բոտ հնարավորին տաղալել, թուլացնել նրա աշխատանքը։

Ստոր թշնամիներին չհաջողվեց կանգնեցնել խորհրդային հայրենասերների հզոր, համաժողովրդական շարժումը։ Հաղթահարելով բոլոր արգելքները, վոր ստեղծել էին Ֆաշիստական վարձկանները, հենց իրենց՝ ՊԱՋԸ-Ավիաքիմիական մասսաները խոշոր գործ կատարեցին իրենց հայրենիքի պաշտպանունակության ամրապնդման համար։ Բայց և այնպես, լրտեսական բանդիտները քիչ վնաս չհասցրին մինչև այն մոմենտը, յերը խորհրդային հետախուզության պանծալի որդանները, վորոնց ղեկավարում է Ստալինյան ժողկոմ ընկեր Յեժովը, մերկացրին ու ջախջախեցին նրանց։ Տրոցկիստական-բուխարինական Ֆաշիստական գործակալների վնասարարական աշխատանքի ամենազլխավոր մեթոդներից մեկը ՊԱՋԸ-Ավիաքիմում յեղել է ՊԱՋԸ-Ավիաքիմի կազմակերպչական քաղաքական աշխատանքի տապալումը։ Թշնամիները ձգտել են ՊԱՋԸ-Ավիաքիմը կազմակերպչորեն դարձնել անզոր, թշնամիները գլխավոր ուշադրությունը դարձրել են ձեռնարկություններում, սովխոզներում ու կոլխոզներում ՊԱՋԸ-Ավիաքիմի սկզբնական կազմակերպությունների թուլացման ու քայքայման վրա։

Վերջին ժամանակվա ընթացքում ՊԱՋԸ-Ավիաքիմի կազմա-

կերպչական քաղաքական ամրապնդման բնագավառում խոշոր աշխատանք է կատարված: ՊԱԶԸ-Ավիաքիմի կազմակերպությունները նշանակալից չափով մաքրվեցին տրոցկիստական-բուխարինական աղտեղությունից: Այդ աղտեղության մնացորդների ջախքախումը շարունակվում է ու պետք է շարունակվի մինչև վերջին լրտեսի լիկվիդացիան ՊԱԶԸ-Ավիաքիմի կազմակերպություններում:

ՊԱԶԸ-Ավիաքիմի բոլոր կազմակերպություններում, սկսած սկզբնական կազմակերպություններից և վերջացրած ընկերության մարզային ու հանրապետական խորհուրդներով, տեղի յեն ունեցել ղեկավար որդանների հաշվետվություններ ու ընտրություններ: Խորհրդային դեմոկրատիզմի սկզբունքների հիման վրա, լայն քննադատության ու ինքնաքննադատության և ղեկավար կադրերի մանրադին ստուգման հիման վրա ՊԱԶԸ-Ավիաքիմի կազմակերպությունների ղեկավար պոստերն են առաջ քաշվել նոր մարդիկ, լավագույն խորհրդային հայրենասերներ, գործարանների ու կոլտնտեսությունների առաջավոր մարդիկ: Այժմ ՊԱԶԸ-Ավիաքիմը պատրաստվում է իր Յ-րդ համամիութենական համագումարին:

Բոլոր ՊԱԶԸ-Ավիաքիմիականների խնդիրն է հանդիսանում՝ ընկերության յուրաքանչյուր կազմակերպություն դարձնել Խորհրդային հայրենասերների գործունյա ու մարտական ջոկատ, պաշտպանական կադրերի դպրոց: Յուրաքանչյուր կոլտնտեսություն մեջ ՊԱԶԸ-Ավիաքիմը պետք է դառնա սիրելի կազմակերպություն, վորի մեջ կոլտնտեսականներն ու կոլտնտեսուհիները ստանում են գործնական ուղեցույց, գիտելիքներ, սովորում են դիսկալինա, աճում են կուլտուրապես ու քաղաքականապես:

ՊԱԶԸ-Ավիաքիմի հիմնական առաջատար լուծույզը՝ «ՊԱԶԸ-Ավիաքիմը ԽՍՀՄ-ի խաղաղ աշխատանքի ու պաշտպանության հենարանն է» — ընդգծում է այդ կամավոր ընկերության ամբողջ աշխատանքի սերտ կապն այն արտադրության հետ, վորի մեջ զբաղված են նրա անդամները: Յեվ այդ հասկանալի յի: Չի կարելի իրարից բաժանել պաշտպանության և խաղաղ սոցիալիստական շինարարության խնդիրները: Հացի, բամբակի, վուշի, ճականդի իրար ընդհանր համար մղվող պայքարը, այդ միևնույն ժամանակ պայքար է մեր մեծ հայրենիքի պաշտպանության հըղորդության ամրապնդման համար:

ՊԱԶԸ-Ավիաքիմի ղեկավար որդանների հաշվետվություններն ու

ներն ու ընտրությունները շատ բարձրացրին ընկերության նըշանակությունը, վորպես մի կազմակերպություն, վոր կոմսոսիստական կուսակցության ոգնականն է մասսաներին սոցիալիստական հայրենիքի նկատմամբ անձնվեր սիրտ վորով դաստիարակելու գործում: ՊԱԶԸ-Ավիաքիմի կազմակերպությունները մյուս հասարակական կազմակերպությունների հետ միասին հանդիս յեկան ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրություններին: ՊԱԶԸ-Ավիաքիմի լավագույն մարդիկ, վորոնք աճել են նրա խմբակներում, ու ակումբներում, առաջադրվեցին ընտրական հանձնաժողովների մեջ և խոշոր աշխատանք կատարեցին: ՊԱԶԸ-Ավիաքիմի ակտիվիստների շարքերից կուսակցական ու վոչ կուսակցական բոլշեիկները, մեր մեծ հայրենիքի հայրենասերներն առաջադրվեցին վորպես կոմսոսիստների ու անկուսակցականների բոկի թեկնածուներ և արժանացան ԽՍՀՄ Գերագույն Խորհրդում ընտրվելու պատվին:

Այժմ հարկավոր է ամրապնդել ՊԱԶԸ-Ավիաքիմիական լայն մասսաների այդ քաղաքական մեծ վերելքը, ամրապնդել ՊԱԶԸ-Ավիաքիմի այդ աճած հեղինակությունը: Հարկավոր է ՊԱԶԸ-Ավիաքիմը դարձնել թշնամական տարերի համար անմատչելի մի ամբողջ, հարկավոր է նրա յուրաքանչյուր կազմակերպությունը դարձնել ժողովրդական մասսաների պաշտպանական ակտիվություն յսկական ղեկավար:

Պատի թերթի խմբիկները և գույթթղթակիցները կարող են և պետք է խոշոր աշխատանք կատարեն կոլտնտեսություններում՝ ՊԱԶԸ-Ավիաքիմի կազմակերպություններն ել ավելի ամրապնդելու ուղղությամբ: Դրա համար բոլոր հնարավորությունները կան. հարկավոր է միայն նախաձեռնություն, բացատրական աշխատանք, մի շարք կազմակերպչական միջոցառումներ:

Սկսել նրանից, վոր հաճախ կոլտնտեսականները նույնիսկ չեն իմանում ՊԱԶԸ-Ավիաքիմի խնդիրներն ու նպատակները: Պատի թերթը պետք է նյութեր տեղավորի յերկրի պաշտպանության սիստեմում ՊԱԶԸ-Ավիաքիմի ունեցած դերի ու նշանակության մասին: Չե վոր հենց ինքը՝ «ՊԱԶԸ-Ավիաքիմ» բառը բացատրության կարիք է զգում, այդ նշանակում է ԽՍՀՄ-ի պաշտպանությանը և ավիացիոն-քիմիական շինարարությանն աջակցող ընկերություն:

Պատի թերթը պետք է սիստեմատիկաբար պայքարի, վորպեսզի ՊԱԶԸ-Ավիաքիմի կոլտնտեսային կազմակերպությունն իր

անդամներին դաստիարակի սոցիալիստական հայրենիքին անձն-
ուրաց կերպով նվիրվածութեան վողով: Չէ՞ վոր ՊԱՋԸ-Ավիաքիմը
կուսակցութեանից ղեպի մասսաները տանող «հաղորդիչ փոկե-
րից մեկն է»: ՊԱՋԸ-Ավիաքիմը վոչ թե պարզապէս հրաձիգներ
ու հեծելակներ ե պատրաստում, այլ պատրաստում ե այնպիսի
հրաձիգներ և այնպիսի հեծելակներ, վորոնք անվերապահորեն
նվիրված են Լենինի—Ստալինի գործին, վորոնք հանդիսանում
են դիտակից մարտիկներ՝ սոցիալիզմի հետագա հաղթանակի
համար:

Շատ կոլտնտեսականներ ծանոթ չեն նաև ՊԱՋԸ-Ավիաքիմի
կազմակերպչական սկզբունքներին: ՊԱՋԸ-Ավիաքիմի կազմա-
կերպչական հիմնական սկզբունքն է ղեմովրատական ցենտրա-
լիզմը: Նրա բոլոր ղեկավար որդանները վերից մինչև վար ընտ-
րովին յեն, բոլոր ղեկավարները պարտավոր են հաշիվ տալ ի-
րենց ընտրող անդամների առաջ: ՊԱՋԸ-Ավիաքիմի անդամների ընդ-
հանուր ժողովը յուրաքանչյուր կազմակերպութեան տերն ե,
դրա հետ միասին ՊԱՋԸ-Ավիաքիմը ձգտում ե խիստ դիսիպլինա-
յի, վոր բոլոր կազմակերպութեաններն անշեղորեն կատարեն
ՊԱՋԸ-Ավիաքիմի վերադաս որդանների վորոշումները, բոլոր ան-
դամները կատարեն ՊԱՋԸ-Ավիաքիմի ընդհանուր ժողովների
վորոշումները:

Կոլտնտեսութեան մեջ ՊԱՋԸ-Ավիաքիմի կանոնավոր, ճշտ-
որոշ կազմակերպումը նրա գործնական աշխատանքի հաջողու-
թեան գրավականն ե: Վիթխարի նշանակութեան ունին աշխա-
տանքի այնպիսի տարրերը, ինչպեսիք են անդամների և նրանց
պաշտպանական ուսուցման սխտեմատիկ հաշվառումը, անդա-
մավճարները կանոնավոր դոնձումը, ՊԱՋԸ-Ավիաքիմի վիճակա-
թաղերին անդամագրումը, կազմակերպութեան միջոցների ծախս-
ման հսկողութեանը և ղենքի ու ուսուցմանական դույրի պահ-
պանութեանը:

Վերջապէս քաղականաշափ լայնորեն չեն հայտնի ՊԱՋԸ-Ա-
վիաքիմի պաշտպանական գործունեութեան տեսակները: Վո-
մանք յենթադրում են, թե այդ գործունեութեանը սահմանա-
փակվում ե նախադիմադրալայններին նախապատրաստելով, ու-
րիշները կարծում են, թե ՊԱՋԸ-Ավիաքիմը բացառապէս ավիա-
ցիան կազմակերպութեանն է: Հարկավոր ե լայն մասսաներին
բացատրել վոր ՊԱՋԸ-Ավիաքիմի կազմակերպութեաններն իրենց
առաջ խնդիր են դնում սովորեցնելու իրենց անդամներին տի-

րապետել ղենքի այն տեսակին, վորը նրանց ավելի յե դուր գա-
լիս վոր ՊԱՋԸ-Ավիաքիմում համախմբված են բոլոր հայրենա-
սերները, վորոնք իրենց խնդիրն են համարում յերկրի պաշտ-
պանութեան հետագա ել ավելի ամրապնդումը:

Պատի թերթի խնդիրն է ամենորոյս պայքար մղել իր կոլ-
տնտեսութեան մեջ ՊԱՋԸ-Ավիաքիմի կազմակերպութեան ամրա-
պնդման համար: Ի՞նչպէս կարող ե անել նա այդ:

Իրա համար հարկավոր ե թերթի աշխատանքին մասնակից ա-
նել կոլտնտեսութեան մեջ յեղած ՊԱՋԸ-Ավիաքիմը անդամներին,
(իսկ յեթե այդպիսիները չկան, ապա նրանց ովքեր ցանկանում
են ՊԱՋԸ-Ավիաքիմի անդամ դառնալ): Թող նրանք իրենց պատի
թերթում գրեն, թե իրենք ի՞նչ են արել, վորպէսզի արգարաց-
նեն պաշտպանութեան հարվածային իրենց կոչումը: Նրանցից
կարելի յե նյութեր ստանալ, թե ինչպէս ե աշխատում ՊԱՋԸ-Ա-
վիաքիմի կոլտնտեսային խորհուրդը, կոլտնտեսութեան մեջ իրա-
պէս ո՞վ ե արժանի կոչվելու պաշտպանութեան ակտիվիստների
այդ առաջավոր կազմակերպութեան անդամ:

Խմբագիրը պետք ե պատի թերթի համար նյութեր ստանա
ՊԱՋԸ-Ավիաքիմի կոլտնտեսային կազմակերպութեան նախագա-
հից և խմբակավարներից՝ իրենց աշխատանքի մասին, այն մա-
սին, թե ի՞նչ ե անում կազմակերպութեանը, ում ե պատրաս-
տում նա, արդյոք կահավորված ե հրաձգարանը, արդյոք կան
հակադռեր, հրացաններ, ուսուցման պիտույքներ, արդյոք
ստեղծված են խմբակներ և այլն: Այս բոլոր հարցերը պետք ե
լայնորեն յուսարանել պատի թերթում:

Իսկ յեթե կոլտնտեսութեանում բոլորովին ՊԱՋԸ-Ավիաքի-
մի կազմակերպութեան չկա և պաշտպանական աշխատանք չի
կազմակերպվում: Կոլտնտեսութեանում ո՞վ պետք ե մտահոգվի
այդպիսի կազմակերպութեան ստեղծելու մասին: Ամենից առաջ
կոլտնտեսութեան կուսակցական կազմակերպութեանը:

Կուսակցական կազմակերպութեանը կատարած չի լինի իր
կարևորագույն պարտականութեանները մեկը, յեթե նա կոլ-
տնտեսութեան մեջ չկազմակերպի պաշտպանական աշխատանքը:
Թող կուսակցութեան անդամները և առաջին հերթին կուսակա-
զմակերպիչը պատի թերթին գրեն, թե իրենք ի՞նչ են արել և
ի՞նչ են ուզում անել ՊԱՋԸ-Ավիաքիմի կազմակերպութեանը ըս-
տեղծելու համար: Թող նրանք գրեն, թե հենց իրենք, վորպէս
առաջավոր մարդիկ, վորպէս Լենինի—Ստալինի մեծ կուսակցու-

թյան անդամներ, պատրաստովում են արդյոք հայրենիքի պաշտպանության գործին, կարողանում են արդյոք կրակել, լավ ձի նստել, ձի քշել, ձի խնամել, հակազդող հաղներ:

Այս հարցերը թերթը պետք է դնի նաև կոլտնտեսության կոմյերիտականների առաջ: Չե՞ վոր իզուր չի, վոր կոմյերիտիկոթյունը կոչում է «ՊԱՋԸ-Ավիաքիմի սիրտն ու հոգին»:

Ամենուրեք, վորտեղ ՊԱՋԸ-Ավիաքիմն աշխատում է, կոմյերիտականներն ամենակատիվ մասնակցությունն են ունենում նրա աշխատանքին: Յե՛վ այդ հասկանալի չէ: Հապա ել ձվ, յեթե վոչ յերիտասարդությունը, պետք է լինի առաջավորը հրացանի ուսուցնասիրություն, ավիացիոն սպորտի, ֆիզկուլտուրայի, ձիավարություն, սպորտի և այլ գործերում: Իսկ կոմյերիտիկոթյունը միշտ պետք է ամբողջ յերիտասարդություն առջևից դնա, և նրան տանի իր հետեից:

Կուսակցական կազմակերպության ղեկավարությունը գյուղական կոմյերիտականներն առաջինը պետք է լինեն և պետք է ձգտեն ստեղծել պաշտպանական կազմակերպություններ: Դրա համար նրանք պետք է կապվեն ՊԱՋԸ-Ավիաքիմի շրջաօրհրդի հետ, գործն սկսելու համար հավաքադրեն ՊԱՋԸ-Ավիաքիմի անդամներին գեթ մի փոքրիկ խմբակ, ընտրեն ժամանակավոր կազմը յուրը, վորը ցանկացողների ցուցակադրություն կսկսի, պետք է հաշվի առնեն հին անդամներին, նոր անդամատուներ տան և, վերջապես, հրավիրեն անդամների ընդհանուր ժողով՝ ՊԱՋԸ-Ավիաքիմի կոլտնտեսային կազմակերպության խորհուրդ և նախագահ ընտրելու համար:

Այսպեսով, պատի թերթը կուսակցական ու կոմյերիտական կազմակերպությունների հետ միասին, կարող է կարեւորագույն գործ կատարել կոլտնտեսության մեջ պաշտպանական աշխատանքը ծավալելու ուղղությամբ:

Այստեղ ևս, ինչպես և ամեն մի աշխատանքում, յուրաքանչյուր խմբագիր, խմբիկի յուրաքանչյուր անդամ և յուրաքանչյուր գյուղթղթակից-կոլտնտեսության առաջավոր մարդը-կոչված է անձնական օրինակ ցույց տալու, դառնալու պաշտպանական աշխատանքի հարվածայինը, նրա կազմակերպիչը:

Պատի թերթը, ոգտագործելով կենտրոնական ու տեղական մամուլի նյութերը, պետք է կոլտնտեսային յերիտասարդություն ուղադրությունը գրավի յերկրի առաջավոր մարդկանց, պաշտպանության ենտուղիստների օրինակները վրա:

ՊԱՋԸ Ավիաքիմի լավագույն հրաձիգները, պարաշուտիստներն ու պլանյորիստները, հակառդային պաշտպանություն և ձիավարության սպորտի ակտիվիստներն ու ակտիվիստուհիները հանդիսանում են Խորհրդային յերկրի նշանավոր մարդիկ: Այն բանից հետո, յերբ նրանք իրենց ՊԱՋԸ-Ավիաքիմիական կազմակերպության շարքերում կտիրապետեն ողմական արվեստի այս կամ այն տեսակին, նրանց սոջև բացվում է հետագա աճման ու կատարելագործման մի լայն ճանապարհ: ՊԱՋԸ-Ավիաքիմի խմբակներում աճել են ներկայումս ամբողջ աշխարհին հայտնի բազմաթիվ ողաչուներ, նշանավոր կոնստրուկտորներ և ավիացիայի ինժեներներ:

Պատի թերթն իր ընթերցողներին պատմելով այդ նշանավոր մարդկանց մասին, կարող է հետաքրքիր ու գրավիչ ձևով կոլտնտեսականներին բացատրել, թե ՊԱՋԸ-Ավիաքիմի աշխատանքին ինչպեսի խոշոր նշանակություն ունի ԽՍՀՄ պաշտպանություն ամրապնդման գործում, ինչու յեն մեզ հարկավոր հրաձիգներ, ողաչուներ, պարաշուտիստներ, քիմիկոսներ: Հարկավոր է ընթերցողներին լայնորեն ծանոթացնել ՊԱՋԸ-Ավիաքիմի աշխատանքի բոլոր տեսակներին: Սովորելով այդ բանն անել՝ պատի թերթը մեծ դեր կխաղա իր կոլտնտեսության մեջ աշխատունակ պաշտպանական կազմակերպություն ստեղծելու գործում:

ՊԱՅՏՊԱՆԱԿԱՆ ԱԹԻԱՏԱՆՔԻ ԿԱԴՐԵՐԸ

Պատի թերթի խմբավորը պաշտպանական աշխատանքի իր առաջին միջոցառումների ծավալման համար պայքարելու առաջին հերթին համ վրա կարող է հենվել:—

Մենք արդեն զուգահեռաբար պատասխանել ենք այդ հարցին: Պահեստի հրամանատարները, արձակուրդավոր կարմիր բանակայինները, բանակից զորացրվածները, մի խոսքով այն բոլոր մարդիկ, վորոնք արդեն գինվորական պատրաստություն ունեն: Մեծահասակներն ու կոմյերտականները, սրտապահողիսաները, տեղական դպրոցների ուսուցիչները, մեր ամբողջ գյուղական ինտելիգենցիան ինքը՝ նախադինակոչային յերիտասարդությունը, վոր ամենուրեք իր շարքերում ունի ֆիզկուլտուրայի, ավիացիայի, հրաձգային սպորտի սիրողներ, անա թե վորքան մեծ է այդ ակտիվը:

Պատի թերթի խմբագրի, խմբավորի և դուրսի թղթակիցների խնդիրն է՝ պատի թերթի աշխատանքներին ակտիվորեն մասնակից անել այդ բոլոր մարդկանց: Հենց նրանց ոգնությունը ել պետք է լայնորեն լուսարանել պաշտպանական աշխատանքն ու ուսուցումը կոլտնտեսությունում, պայքարել պաշտպանական լավագույն ձևերի համար:

Յեվ այսուամենայնիվ կլինի խմբագիր, վորին կթվա, թե վրչ վրք չկա, բոլորն ել զբաղված են իրենց գործով, բոլորը ծանրաբեռնված են, նրանք ժամանակ չունեն պաշտպանություն գծով հասարակական աշխատանք կատարելու, նոր «ծանրաբեռնություն» հնարավորություն չունեն: Բայց դա միայն կթվա այդպես: Բավական է, վոր դու մարդուն առաջարկես այն, ինչ նրան հետաքրքրում է և նա սիրով ձեռնամուխ կլինի գործին:

Չափից դուրս միք ծանրաբեռնի մեկին, ամենաակտիվին և գործ կատարողին: Աշխատանքը բաժանեցեք շատ բնկերների մեջ, անընդհատ ընդարձակեցեք ձեր ակտիվը: Միք վախենա կա-

րեվոր գործը վստահել յերիտասարդ մարդուն վոր դեռ բոլորովին փորձառու չէ, բայց ջերմ ակտիվիստ է: Նա կաճի այդ գործի մեջ, շուտով նա ավելի փորձառու կդառնա, քան շատ ուրիշները:

Վրմանց թվում է, թե կոլտնտեսուհիները պաշտպանական աշխատանքի համար հարմար չեն: Այդ անհեթեթ, սխալ տեսակետ է: Հաղորդվոր խորհրդային աղջիկներ արդեն ապացուցել են, վոր նրանք կարող են պաշտպանական սպորտի և ռազմական ուսուցման շատ բնագավառներում հաջողությամբ մրցել ազամարդու հետ: Ուկրաինայի կոլտնտեսություններում քիմիական ջոկատների մեծ մասը կիսով չափ կանանցից է բաղկացած: Տուլայի մարզի Կալուգայի շրջանի կոլտնտեսուհի աղջիկները ցույց տվին, վոր նրանք կարող են վորոշիլովաբար հրացան կրբակել: Ամբողջ յերկիրը ճանաչում է մեր պարաշուտիստ, սլրլաներիստ և ողաշու պանծալի աղջիկներին:

Կոլտնտեսուհին պետք է ներգրավվի նաև ակտիվ կազմակերպչական աշխատանքի մեջ, արդեն քիչ կանայք չկան ՊԱՅՏՊԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ նախադասների պաշտպանական խմբակների գեկավարներ շարքերում:

Հարկավոր է կանանց ամեն կերպ ներգրավել ռազմական գործի ուրման մեջ: Չե՞ վոր ժամանակակից պատերազմը ջնջում է ռազմաճակատի ու թիկունքի միջև յեղած սահմանը: Թշնամին կարող է յերեվալ ամեն կողմից, հարձակման կարող է յենթարկվել յուրաքանչյուր բնակավայր: Մեր մայրերն ու քույրերը պետք է վոչ միայն պաշտպանեն իրենց յերեխաներին, վոչ միայն ոգնեն պաշտպանել մեր տներն ու ձեռնարկությունները, այլև պետք է կարողանան վոչնչացնել ֆաշիստական հարձակողների ոգային գնանաղ, բռնել հետախույզներին, գինված լրտեսին:

Ռազմաճակատում էս կանանց համար գործ կգտնվի: Այդ ամենից առաջ վիրավորներին ոգնելն է և հիվանդների սանիտարական ծառայությունը: Այդ գործի համար կանայք պետք է պատրաստվեն այժմ, խաղող ժամանակներում: Կոլտնտեսուհիները պետք է հանձնեն «Պատրաստ սանիտարական պաշտպանություն» կրցքանշանի նորմաները: Անհրաժեշտ է այդ նորմաների հանձմանը նախապատրաստելու նպատակով խմբակներ կազմակերպել:

Համարյա ամբողջապես կանանցից են կազմվում նաև քի-

միական ջոկատների (ՀՈՒՊ-ի ջոկատների) և ինքնապաշտպանության խմբակների սանիտարական ողակները:

Մենք տեսնում ենք, վոր պաշտպանական աշխատանքի համար գյուղում ավելի, քան բավականաչափ ակտիվ կա: Հարկավոր է միայն այդ ակտիվին գործի լծել, յուրաքանչյուրին իր հակումներին, ընդունակություններին համապատասխան աշխատանք տալ: Այստեղ իրեն, ուժերի գործադրություն կարող են գտնել և՛ կոլտնտեսային յերիտասարդությունը, և՛ կոլտնտեսուհիները, և՛ ծեբերը: Խնդիրը միայն կոլտնտեսություն ղեկավարների և հասարակական կազմակերպությունների նախաձեռնությունն ու ակտիվությունն է: Սակայն այդ գործում ամենից շատ նախաձեռնություն, հետեւողականություն, ակտիվություն ու կազմակերպվածություն մենք սպասում ենք կոլտնտեսային, բրիգադային պատի թերթերի խմբկոններից ու գյուղթղթակիցներից կոլտնտեսություն մեջ մասնակցական քաղաքական միջոցառումների այդ առաջին նախաձեռնողներից:

* * *

Մեր դասախոսություն մեջ պատմված է պատի թերթի պաշտպանական աշխատանքի ձևերի ու մեթոդների մասին: Չի կարելի սահմանափակվել միայն նրանով, ինչ վոր այստեղ հանձնարարվեց: Պատի թերթի խմբկոնը և նրա ակտիվը հենց իրենք կարող են գտնել նոր, հետաքրքիր միջոցներ՝ հասնելու համար նույն նպատակին, դաստիարակելու և պատրաստելու համար մեր մեծ հայրենիքի պաշտպանների նորանոր կադրեր:

Այս կապակցությամբ շատ կարևոր է պաշտպանական աշխատանքի փորձի փոխանակությունը պատի թերթերի ու գյուղթղթակիցների միջև: Անհրաժեշտ է կենտրոնական մամուլին զբղել իրենց հաջողությունների ու դժվարությունների մասին, աշխատանքի նոր հաջող մեթոդների մասին: «Կրեստայանսկայա Գաղեստա»-ն, «Նա Ստրածե»-ն, «Ռարոչե-Կրեստիանսկի Կրեստայան-դենտ» և «Սելկոր» ժուռնալները և մամուլի այլ օրգանները, անկասկած, կողմեն լավ աշխատանքի փորձի այդպիսի փոխանակմանը, կողմեն պատի թերթերին ու գյուղթղթակիցներին՝ Խորհուրդների Ֆերկրի պաշտպանական հզորությունն ամրապնդելու իրենց պատասխանատու աշխատանքներում:

1. ՊԱՋԼ-Ավիաքիմի աշխատանքին լինչպես են մասնակցում ձեր կոլտնտեսություն խմբկոնի անդամներն ու գյուղթղթակիցները:

2. Ձեր կոլտնտեսություն լինչպիսի պաշտպանական ու ֆիզկուլտուրային խմբակներ ձե կազմակերպված և ինչպես են ոգնում նրանց աշխատանքին պատի թերթն ու գյուղթղթակիցները:

3. Պատի թերթի խմբկոնը և գյուղթղթակիցներն լինչպես պետք է մշտական պրոպագանդա մղեն ռազմական պրակտիկ դիտելիքների համար:

4. Պատի թերթի խմբկոնը և գյուղթղթակիցներն ինչպե՞ս են նախապատրաստվում Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի Ռազմա-Ծոյվային Նավատորմի զսաներոդ տարեդարձի տոնակատարությունը:

5. Պատի թերթի խմբկոնը և գյուղթղթակիցներն լինչպե՞ս և լինչպես կարող են ոգնել ՊԱՋԼ-Ավիաքիմի գյուղական կազմակերպությանը, վորպեսզի այն դարձնեն խորհրդային հայրենասերների գործույա, մարտական ջոկատ:

6. Պատի թերթը և գյուղթղթակիցներն լինչ աշխատանք են կատարում նախադինակոչային յերիտասարդության մեջ:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆԲՆԵՐ

1. Կազմեցեք պատի թերթի պաշտպանական ու ֆիզկուլտուրային աշխատանքի պլանը մոտակա 2—3 ամսի համար:

2. Գյուղթղթակիցների և գյուղի կուլտ ակտիվի հետ նախագծեցեք և քննարկեցեք կոնկրետ միջոցառումներ Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի և Ռազմա-Ծոյվային Նավատորմի 20-րդ տարեդարձի տոնակատարության նախապատրաստման ու կատարման համար:

3. Պատի թերթում լուսաբանեցեք ՊԱՋԼ-Ավիաքիմի գյուղական կազմակերպության աշխատանքը:

ՊԱՏ. ԽՄԲԱԳԻՐ ՀՐ. ՄԱՐԳԱՐԹԱՆ
ՍՐԲԱԳՐԻԶ Խ. ՊԵՏՐՈՍԹԱՆ

ԴՅՈՒՆԻՍԻԱՆԻ ՄԱՐԿԱՐԹ

ՅԵՐԵՎԱՆ, «ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ»-Ի ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅԱՆ ՏՊԱՐԱՆ

Պատվեր № 362 տիրած 2000 Դրամիկա № 6532

ՀՀ Ազգային գրադարան



NL0928190

17 АВГ 1938

II
28775

Б. ЛЕОНТЬЕВ

Оборонная работа в колхозе
и задачи стенгазеты

Издательство ЦККП (б) Арм. „Хорурдажи Айастан“
Ереван, 1938 г.